



ՆՈՅԻ ԱԳՈՍԻԸ

(ՃԱՆԱԳԱՐՀՈՐԴԱԿԱՆ ԶՐՈՅՑ)

Ա.



Օգոստոսի սիրուն առաւօտներից մինն էր, երբ ես ու ընկերս՝ կանխաւ արած մեր որոշման համաձայն՝ դուրս եկանք քաղաքից ձիով՝ հայրենի գաւառակի գիւղերը պտտելու և մի քանի աւերակներ անձամբ տեսնելու:

Մենք պատկանում էինք «տուն վերադարձող» այն նորեկների թուխն, որոնք ընտանիքի հացը հայթայթելու համար, ստիպուած են լինում տարիներով ապրել մայրաքաղաքում, ծծել միշտ նրա անառողջ օդը, սնուել աւելի փոշիով բան թէ կերակրով և, հետևապէս, կարօտիլ այնպիսի բարիքների, զորս բնութեան մէջ ապրող մարդը վայելում է առատօրէն, առանց, սակայն, նրանց արժէքը գնահատել կարենալու:

Ի՞նչ բան է, օրինակ, մարութ՝օդը, դաշտի կանաչը,

հովտի առուակը, անտառի դուր... միթէ կարելի է կարօտիլ դրանց, կամ ցանկացած ժամին չվայելել: Լեռնդի գեղջուկը, որ *կարիք* բառը հասկանում է միայն նիւթականի վերաբերմամբ, անշուշտ կծիծաղէր, եթէ իմանար թէ՛ մեր զրկանքը կազմում են այդ չնչին, հազիւ երբեմն իւր կարիքը լցուցանող բաները:

Բայց ով տարիներով ապրել է մեծ բաղարում, միշտ միևնոյն նեղ փողոցի վրայ, նոյն ապականուած միջնորտի մէջ, և դորձել շարունակ լուսից ու օդից զուրկ մի գրասենեակում, որի բոլոր հրապոյրը կազմում են եղել չոր հաշուեմատեանները, երկաթէ պահարանը և անմիտ համարիչը, իրեր, որոնք առնչութիւն ունին միայն *փողի* և *հաշուի* հետ, բայց որոնց անծանօթ է *սիրտը* և *աւելի* ևս զգայուն *հոգին*, իրեր, որոնք մարդու ուղեղը բթացնում, աշխոյժը մարում և հոգին նուաստացնում են... այդպիսին, ասում եմ, կարօտելով կկարօտի այն ամենին, ինչ որ անարժէք է բնութեան զաւակի համար. կկարօտի նրա դաշտին ու մարդին, նրա հովտին ու առուակին, նրա անտառի անոյշ հովերին:

Մինք ևս, ահա, այդ կարօտեալներից էինք. Ընկերս վերադարձել էր Մոսկուայից, իսկ ես Թիֆլիսից: Երկուսս այժմ միացած՝ գնում էինք բնութեան բազրուածիւններից մեր կարօտն աւելելու:

Պետրոս Մինարեանը, (այս էր ուղեկցիս անունը), հայոց հողերի դպրոցի նախկին սան էր. տակաւին երկտասարդ, միջահասակ, փոքր ինչ թուլակազմ, բայց աշխոյժ ու գրաւչադէմ: Բնաւորութեամբ բաւական անհամբեր և գիւրազրգիւ, երբեմն, նաև յանդուգն ու անքաղաքավար բայց սրտով բարի և անկեղծ: Ունէր տարօրինակ հայեացքներ, որոնք էւր լսօսակիցներին մերթ դայրոյթ և յաճախ՝ զու՛ճութիւն էին պատճառում, բայց ինքը երկու դէպքումն էլ մնում էր անտարբեր: Միրում էր խառնուել ուրիշների գործին, կամ յաճախ՝ ինքնակոչ դատաւոր հանդիսանալ: Միրում էր վիճաբանել, ազատ մտքեր յայտնել, բայց երբեմն աւելի հակառակելու, քան մի ճշմարտութիւն ասելու համար: Սյուտամենայիւ, այս բոլոր տարօրինակութիւնների հետ միասին, ճանապարհի լաւ

ընկեր էր. որովհետև սրտոտ էր, կամարար և սակա-
կապետ:

Բաւական ժամեր էին անցել՝ ինչ ելել էինք քաղա-
րից և թէպէտ առաւօտը զով էր ու հեշտալի, այսուա-
մենայնիւ, քանի արևը բարձրանում էր՝ այնքան աւելի
օդը ջերմանում և նեղացնում էր մեզ. Միջօրէի մօտ՝ մենք
գտնուում էինք արդէն բաց դաշտի վրայ: Արևի ճառա-
գայթնները կարծես այրում էին. չկար ոչ հովի շունչ ոչ
ծառերի շքարան: Այդ պատճառով աշխատում էինք ժամ
առաջ հասնել գիւղը, որ գտնուում էր՝ մեր հանդէպ եղող
լեռան գեղադիր լանջի վրայ:

Չնայելով որ քաղաքից ելածներս միջոցին ընկերս
պատմում էր թէ՛ մի օր հիացմունքով էր մտածում այն
ժամի ու վայրկեանի մասին՝ երբ մայրաքաղաքից հեռա-
ցած՝ գտնուում կլինէր հայրենիքում, նրա ազատ օդի ու
դաշտերի մէջ և չնայելով որ այդ ժամին նրա փափազն
արդէն կատարուած էր, այսուամենայնիւ, նկատում էի որ
երիտասարդի համբերութիւնը ենթարկուում է փորձու-
թեան: Տօթից, ըստ երևութին, նա աւելի էր նեղանում,
ուստի և յաճախ դանդաւորում էր:

Երբ մի ձորակի գետակն անցնելով՝ սկսանք դէպի
գիւղը տանող առապարը բարձրանալ, միջօրէի տապը
աւելի ևս զգալի դարձաւ. որովհետև արևի ճառագայթ-
ներից զատ՝ այրել սկսան մեզ նաև կեծացած ժայռերը,
որոնք եզերում էին առապարը երկու կողմից:

—Մի, մի հասնէինք այն սօսիններին, բացականչեց
յանկարծ ընկերս այնպիսի մի կարօտով, որ կարծես
գտնուում էր Սահարայի անապատում և ուր որ է խոր-
շակը շնչասպառ պիտի անէ իրեն:

—Համբերութիւն, բարեկամ, սօսիններին էլ կը հաս-
նենք, նկատեցի ես:

—Համբերութիւն... միշտ համբերութիւն, շնչաց
Պետրոսը, կարծես դժգոհ իմ խօսքից և ապա դառնա-
լով ինձ հարցրեց. —Ինչ ևս կարծում, ուրքեր են համբե-
րում:

—Ինչպէս թէ ուրքեր, ի հարկէ, համբերատարները,
պատասխանեցի ես:

— Իսկ ես չեմ կամենում համբերատար կոչուիլ:

— Ինչո՞ւ, հարցրի նրան:

— Որովհետև համբերում են միայն թողներն ու տկարները. այսինքն, մարդիկ, որոնք այս կամ այն չարիքը սեփական ուժով իրենցից հեռացնել չկարենալով տանում են նրա պատճառած նեղութիւնները ստրկաբար: Բայց որպէս զի այդ անարգանք չհամարուի իրենց՝ ասում են թէ՛ «համբերում ենք»:

— Էհ, եթէ չհամբերես, ինչ պիտի անես. կարող ես արևի հրավառ գունդը հեռացնել քո գլխից, կամ այս շիկացած ժայռերը հովանաւոր ծառերի փոխել:

— Չեմ կարող:

— Ինչո՞ւ ուրեմն՝ ի՞նչ զուր ազմուկ ես հանում:

— Նրա համար, որ ցոյց տամ թէ՛ անդգայ արարածին մէկը չեմ, թէ՛ իմ մէջ կեանք ու կենդանութիւն կայ, թէ՛ հեշտութիւնն ինձ հաճոյք՝ իսկ նեղութիւնը դժգոհութիւն է պատճառում:

— Իսկ դրա օգնւտը:

— Այն, որ մարդիկ ճանաչելով ինձ՝ զգաստ կրկնեն միշտ իմ վերաբերմամբ և զգուշութեամբ կրկնուեն հետքս: Հօ գիտես որ աշխոյժ ու շտանձահարուող ձիուն մօտենում են երկխոյզով ու փաղաքշանօր և հաղլու ուրեմըն կարողանում են հեծնել. մինչդեռ համբերատար իշխնականջներից բաշելով՝ բարձում են միշտ որքան կամենում են, առանց նրա կամքն ու ցանկութիւնը հարցնելու:

Ես ծիծաղեցի:

— Դու այս կարծիքին չե՞ս. հարցրեց ընկերս զարմանալով:

— Ո՛չ. սլատասխանեցի ես:

— Ինչո՞ւ:

— Որովհետև համբերել բառը աւելի բարձր նշանակութիւն ունի, քան ինչ որ դու տալիս ես նրան. էչերի ու ձիաների հասարակութեան մէջ, հաւանական է, որ նա համարուի անարգ ունակութիւն, բայց մարդկային հասարակութեան մէջ, համբերութիւնը ճանաչում է առարկնութիւն:

— Միջնադարեան վարդապետների կարծիքով, ընդհատեց Պետրոսը:

— Նոյն իսկ վերջնադարեան փիլիսոփաների կարծիքով, յարեցի ես:

— Պատճառը:

— Որովհետև համբերութիւնը բարիք է արտադրում, մինչդեռ անհամբերութիւնից միայն չարիք է առաջանում:

— Այդ ի՞նչպէս է լինում:

— Այնպէս, որ աշխարհում համբերում են, առհասարակ, կամքի ոյժ, հոգւոյ արիութիւն և սրտի կորով ունեցողները. հետևապէս, մեծ գործերն էլ ստեղծում են դրանք. Կարգապատմութիւնը և կրտսնես, որ աշխարհի բոլոր նշանաւոր դիտերը, բոլոր մեծամեծ գործերը արդիւնք են եղել դժուարատար նեղութեանց ու հերոսական համբերութեանց: Անհամբերութիւնն, ընդ հակառակը, նշան է թուլութեան ու անզօրութեան: Ուստի երբէք չէ տեսնուած որ անհամբերին մէկը կարողանար մարդկութեան համար ստեղծել մի մեծ բարիք: Այս է, ահա, պատճառը որ համբերութիւնը համարուում է առաքինութիւն և բարոյախօսներից մինը, մինչև անգամ, աւելի մեծ փառք է համարում մարդու համար՝ մեծամեծ նեղութեանց համբերելը, քան մեծ գործեր կատարելը:

— Այդ գուցէ այդպէս է. բայց երբ արևն այրում է, հօ կարելի է նրա դէմ տրտնջալ: Չէ՞ որ տրտնջող թեթեւացնում է մարդու նեղութիւնը:

— Ընդհակառակը, պէտք է սովորել՝ երբէք և ոչ մի բանի դէմ չտրտնջալ. այլ դրա փոխարէն աշխատել՝ նեղութեան պատճառը մէջ տեղից հեռացնել: Ծոյլ ու անզօր մարդը ճանճի շիթելու դէմ էլ է տրտնջում, փոխանակ լուրթեամբ ձեռքը բարձրացնելու և նրան քշելու:

— Զանճը կարելի է քշել, արևը նրտեղ քշենք:

— Այդ դէպքում էլ՝ արևը քշելու փոխարէն ձիդ պէտք է քշես, և մի կէս ժամ առաջ տուն համնես. համբերատար և գործունեայ մարդու համար միշտ փրկութեան ճանապարհ կայ:

Ընկերս լուռ էր: Չգիտեմ համաձայնուեց ինձ հետ,

Թէ կամեցաւ անգոր չերևալ իմ աչքում: Այսուամենայնիւ, ոչ մի նոր առարկութիւն չանելով՝ շարունակեց ճանապարհը, առանց այլ ևս տրտնջալու արևի դէմ, որ այրում էր մեզ, արգարև, անողորմարար:

Փոքր ժամանակից յետոյ մենք գիւղը հասանք և ուղղակի գիմեցինք ընկերոջս ազգական գիւղացու տունը: Վերջինի հովանաւոր սրահը և հիւրընկալի բազըքը ընդունելութիւնը շուտով մոռացրին մեզ ճանապարհի շոգից կրած մեր նեղութիւնը:

Բ.

Հետևեալ օրը, նախաճաշ անելուց յետ, դուրս եկանք տանից՝ գիւղն ու նրա շրջակաները գիտելու: Հարկ չկայ ասել, որ ամենից առաջ այցելեցինք գիւղի եկեղեցին, որ գտնուում էր շինութիւններից դուրս, մի առանձնացած բլրակի լանջի վրայ, որտեղից բացուում էր մեր առաջ թէ գիւղի և թէ շրջակաների տեսարանը: Եկեղեցին մի անպաճայճ շինութիւն էր, մամուապատ կտուրով և փայտէ, խարխուղ դանգակատնով: Տեսնելու արժանի ոչինչ չունէր իւր շուրջը, բացի փոքրիկ բանջարանոցը, որ գտնուում էր եկեղեցու առաջ և ուռուցում բաւական յորդ մի վտակով: Մեզ ուղեկցող հիւրընկալի ասելով՝ այդ բանջարանոցը ծառայում էր տեղական բահանային և տալիս էր նրան ուտելու սոխ, կանաչեղէն, մի քանի տասնեակ վարունգ և ձմեռուայ համար՝ քանի մի հատ դդում:

— Այս ջրով կարելի էր գրախտ ստեղծել այստեղ, իսկ ձեր քահանան միայն սոխով ու վարունգով է բաւականանում, նկատեցի ես հիւրընկալիս:

— Էդ ջրով, հրաման քես, շատ բան կշինուէր ըստի. ամա ինչ արած որ, դէրը (քահանան) էշն (աշխոյժ) չունի շինելու, պատասխանեց գիւղացին:

— Գուր շինեցէք, վրայ բերաւ ընկերս:

— Մենք ի՞նչ շինենք:

— Ծառեր տնկեցէք, վագեր շարեցէք, գրօնելու ճանապարհ բացէք, եկեղեցին հօ տէրինը չէ:

— Դէրինը չէ, գիղամ. ժողովրդինն ա. ամա որ դէրը չթողնի, մենք ինչ կարանք անել:

— Ինչպէս թէ չթողնի, ինչ իրաւունք ունի արգիլելու, բացականչեց Պետրոսը և տեսնելով որ քահանան եկեղեցու կողմից իջնում է դէպի մեղ, աւելացրեց. — սա է ձեր քահանան. թող մի գայ այստեղ, տես ինչպէս եմ խայտառակում:

— Թող, այ մարդ, ինչ գործ ունես, ինչ յանդիմանութեան ժամանակ է. դեռ առաջ մի ծանօթացիր հետը, նկատեցի ես:

— Ինչ ծանօթութիւն, բան չունիս, պատասխանեց ընկերս և կռուելու պատրաստուող արաղաղի նման յարձակողական դիրք բռնեց:

— Թող, քե մատաղ, խօսալ մի, դէրն ինձանկեց կնեղանայ, խնդրեց և հիւրընկալ:

Քայց Պետրոսն արդէն մի քայլ առաջացել էր դէպի քահանան, որը մօտենում էր:

Սա տարիքով յիտունի մօտ, առաջակազմ, հաստամարմին, ալիխառն մօրուքով և բարի դէմքով մի մարդ էր. հազած էր սև մահուտից կարած մի պարեգօտ, որն հնութիւնից արդէն մաշուել, գունատել էր. ծածկած էր գառան մորթուց պատրաստած գլխարկ. ոտքերին ունէր քոշեր և ձեռքին դեղնափայտի գաւազան:

Միջանկեալ ասենք որ տարիներ առաջ, քանի դեռ լուսաւորութեան ճառագայթները այսքան չէին մօտեցել մեր եկեղեցու շէմքերին, հայ քահանան հայր էր համարուում ամեն մի հայ քրիստոնէի. նրանք միմեանց պատահելուց՝ սիրով ողջունում էին իրար, առանց նայելու թէ՛ ծանօթ են միմեանց թէ ոչ: Այժմ ի հարկէ, այդ դեղեցիկ և բուն քրիստոնէական սովորութիւնը մոռացութեան է տրուած՝ իբրև անպէտք հնութիւն: Քաղարներում, մանաւանդ, անհրաժեշտ է, որ այս ինչ հային՝ անպատճառ մի երկրորդը ծանօթացնէ պաշտօնապէս այն ինչ քահանայի հետ, որպէս զի այնուհետև առաջինը՝ բարեհաճէ ողջունել վերջինին, երբ պատահէ նրան ճանապարհին, կամ որ և է հասարակութեան մէջ:

Տէր Մակուշը (զիւլի քահանայի անունն էր) անծա-

նօթ էր, ի հարկէ, քաղաքներում ընդունուած այս սովորութեան. ուստի հեռուից տեսած լինելով մեզ, իբրև հայ քահանայ, շտապել էր մեզ ուղջունելու և, իբրև նորեկներ, բարի գալուստ մաղթելու:

Այդ իմանալով ես՝ շտապեցի առաջ անցնել Պետրոսից և գլխարկս հանելով՝ «օրհնեա տէր» ասել:

— Աստուած օրհնեցէ, բարի լինի գալուստներդ, պատասխանեց տէր հայրը և ձեռքը նախ ինձ՝ ապա Պետրոսին տալով ողջունեց մեզ սիրով և այնպիսի մի մտերմութեամբ, որ կարծես թէ հին բարեկամներ էինք:

Պետրոսը, որ անհամբերութեամբ էր սպասում ողջունի այս ծիսակատարութեան, յանկարծ, առանց որևէ յտաջարանի. հարցրեց.

— Տէր հայր, ի՞նչ է նշանակում աւետարանի այն խօսքը, որ ասում է՝ դուք ոչ մտանէք և որոց մտանենն՝ շտապ թոյլ մտանել»:

Քահանան, որ այսպիսի անակնկալ հարցի չէր ըստապում, նախ շփոթուեց, ապա ինքն իրեն գալով՝ ժլպտաց և մեղմով հարցրեց.

— Ընչի հմար ես հարցնում:

— Ի՞նչպէս թէ ինչի համար. քահանայ ես, շատ անգամ ժողովրդի առաջ կարդում ես աւետարանի այդ խօսքերը. այժմ կամենում եմ իմանալ թէ՛ հասկանում ես դրանց նշանակութիւնը թէ՛ ոչ:

— Բաս որ չհասկանանք, ո՞նց կարանք կարգալ, սրբի, պատասխանեց տէր հայրը:

— Դէհ, որ հասկանաւ ես, թարգմանիր տեսնեմ:

— Ո՞նց թարգմանեմ, աւետարանը ըստի պտի, որ կարդամ թարգմանեմ. առարկեց քահանան ժպտալով:

— Այ, ես բերան ասում եմ էլի, «դուք ոչ մտանէք և որոց մտանենն՝ շտապ թոյլ»:

— Դէհ, թարգմանիր:

— Սաքի դու դրա միտքը իմանում չե՞ս:

— Իմանում եմ:

— Բա՛ խի ես հարցնում:

— Հարցնում եմ տեսնեմ դու էլ իմանում ես թէ՛ ոչ:

— Ա Մնրի (Միքայէլ), էս մեր Մինարանց Ակոբի տղան չի, դարձաւ քահանան մեր հիւրընկալին:

— Հա՛ ա՛ դէր, Ակոր աղի տղան ա, պատասխանեց գիւղացին:

— Աստօժ պահի, լաւ մենծացել ա՛, հօրը քէօմակ կըլլի (կօգնի), յարեց քահանան, աշխատելով այժմ միջանկեալ հաճոյախօսութեամբ ազատուել Պետրոսի հետապընդութիւնից:

Բայց վերջինս՝ անխիղճ պարտատիրոջ պէս՝ տէր հօր օձիբը չթողեց:

— Այդ իմացանք, տէր հայր, դու մի իմ հարցին պատասխանիր. կրկնեց նա՝ քահանայի թեկից քաշելով:

Տէր հայրը, կարծես, բարկացաւ, և խօսակցի վրայ մի քննական հայեացք ձգելուց յետ՝ դարձաւ մեր հիւրընկալին:

— Ա Մուր, դօնադդ (հիւրդ) կռուարար մարդ ա էրևում:

— Չէ, ա՛ դէր, լաւ տղայ ա, ասներ մի քիչ հանարչի ա, պատասխանեց գիւղացին, աշխատելով արդարացնել Պետրոսին:

— Տօ, տնածակ, ըսնեց հանաք կըլլի, ինձ պատին դէմ ա արել թէ՛ հէնց դու ես որ պտի թարգմանես. խի՛, ես Սողոմոն իմաստուն եմ:

Տէր հայրը զինաթափ եղաւ, Մենք սկօանք ծիծաղել:

— Ա՛յ, տեսնում ես, տէր հայր, եթէ մի փոքր առաջ խոստովանէիր թէ՛ չգիտես, այն ժամանակ ինքս կ'իթարդ մանէի, դարձաւ Պետրոսը քահանային. այժմ բացատրեմ, լսիր. «Դուր ոչ մտանէք և որոց մտանենն՝ չտայր թոյր», կնշանակէ թէ՛ դուք չէք մտնում, և ուրբեր էլ որ մտնում են, նրանց չէք թողնում...

— Գիտում եմ, գիտում, րնդհատեց յանկարծ քահանան, չկամենալով, այսուամենայնիւ, բոլորովին տգէտ երևալ մեր աչրում — Քրիստոս էդ խօսքերը մեր վարդապետներին ա ասում. եանի թէ՛ (այսինքն) դուք ամուսնութեանի մէջ չէք մտնում ու հով որ էլ որ ուզում ա մտնի, նրան թողում չէք:

— Վայ տունը շժակուի տէր տէր, բացականչեց Պետրոսը և բարձրաձայն ծիծաղեց. նրան հետևեցի և ես:

— Խի՛ էք ծիծաղում, բա ըսնեց չի. հարցրեց քահանան մի առանձին յաւակնութեամբ:

— Զէ, չէ, տէր-հայր, մէջ մտայ ես. Քրիստոս արքայութեան համար է խօսում, և դպիրներին ու փարիսեցիներին է ասում թէ՛ դուք արքայութիւն չէք մտնում և ուրբեր էլ որ կամենում են մտնել, թող չէ տալիս նրանց։ Ի՛է, հեր օրհնած, ամուսնութիւնն էլ արքայութեան նման բան ա, ես ըսկի շատ չեմ եանդիլ չ եկել (սխալուել)։ Ժպտալով ասաց քահանան, և ապա դառնալով Պետրոսին հարցրեց՝

— Մի ասա տեսնեմ ինձ խօսի ես ըտենց հարցափորձ անում։

— Այ թէ ինչո՞ւ. Մենք եկել ենք ձեր եկեղեցին այցելելու և տեսնում ենք սրա առաջ այս ողորմելի բանջարանոցը, որի մէջ միայն մի քանի ածուներ ունիս դու։ Միևնոյն ժամանակ այստեղ հոսում է այս յորդ առուակը, որից դու կարող էիր օգտուել և եկեղեցու առաջ, այս ահագին տարածութեան վրայ՝ ծառեր տնկել, դրօսարան շինել, իսկ այդ ծառերը օգուտ կբերէին թէ՛ քեզ թէ՛ եկեղեցուն և թէ՛ ժողովրդին։ Բայց դու չես արել. որովհետև, ինչպէս Մուրին ասում է, էջխ չունիս. Հարցնում ենք սրան թէ՛ ինչո՞ւ դուք, գիւղացիներդ չէք անում, պատասխանում է թէ՛ «տէր հայրը չի թողիր»։ Այ հէնց դրա համար էլ կամեցայ հասկացնել քեզ թէ՛ Քրիստոսի այն խօսքը, որ ասում է՝ «դուք չէք մտնում և ուրբեր էլ որ մտնում են, չէք թողնում» հէնց ձեզ նման հովիւների համար է ասած։

— Տէր. Մակուշը մի դժգոհ հայեացք ձգեց մեր հիւրընկալի վրայ և ապա դառնալով Պետրոսին՝ ասաց.

— Հէր օրհնած. էս եղցումը (եկեղեցում), ինձանից առաջ, մինչև տասը, տասներկու քահանայ ծառայել են, ծերացել ու մեռել։ Դիվունանց գերեզմաններն էլ, հրէս, ըստի, եղցու քամակին են. ուզում էք գնանք մի մի շըհանց տամ։ Ընդոնցից ո՞րն ա ըստի մի չոփ (չոր ոստի կտոր) տնկել որ ես տնկեմ։

— Նրանք չեն արել այդ բանը, դու արա. դու բարի օրինակ եղիր քեզանից յետոյ եկողներին։

— Մի՛թամ էդ ի՛նչ օգուտ պտի բերի ինձ՝ ես (կամ) եղցուն։

—Նախ այն՝ որ այս չոր դետինը կծածկուի ծառերով, իսկ ծառաստանը աւելի լաւ է, քան թէ չոր տափաստանը: Երկրորդ՝ եկեղեցու շրջապատի օդը աւելի մաքուր և առողջարար կլինի, իսկ տեսարանը դիւրեկան. երրորդ՝ տնկածդ ծառերը պտուղ կբերեն, որից թէ դու կօգտուես և թէ եկեղեցին: Չորրորդ...

—Դէ մը խրէ (մի քիչ) սպասիր. ընդհատեց քահանան Պետրոսին. և ապա կրթնելով գաւազանի վրայ, մի առանձին, հեղինակաւոր եղանակով շարունակեց. — որդի. դիդաս, խօսիր հեշտ ա քանց անկը: Մի բան պատմեմ խիբ: Մի բան օր սրանից առաջ մեր յաջորդը վանքն էր գնում. բաղաքից գալիս մեր գեղովն անցաւ. շնորհակալ եմ, պատուեց ինձ. եկաւ մեր տանը դինջացաւ (հանգըստացաւ) հաց կերաւ. վերջը ասեց. — «Տէր Մակուշ, գնանք մի ձեր եղջին տեսնենք». ծառայ եմ, ասեցի, հայր սուրբ, գնանք: Վեր կացանք եկանք: Քէօխվէն էլ մեզ հետ էր, սուղիան էլ, մի երկու էլ գեղի իշխան (առաջաւոր) մարդիկ: Վարդապետը շննց որ եղջին մտաւ, աչքերը մի դէս ու դէն զցեց, ինքն իրան փնթփնթաց ու ասեց. «Տէր Մակուշ, էս խն եղջին ըսենց անզարդ ես պահում: — Ո՞նց եմ անզարդ պահում, հայր սուրբ. հարցրի ես: — Էնե՞նց ես անզարդ պահում, ասեց, որ այ, էս սուրբ սկիհի տակը մի արբէշում աղլուխ չես զցում էս աւետարանը մի զառ շորում չես փաթաթում. էս ատենին կազմել չես տալիս. ես չէ, էս ի՞նչ պատկեր ա, որ դրել ես սեղանի վրայ. ըսենց Քրիստոս կըլլի. էս հօ դուխարօր մալական ա: Ի՞նչ մեղքս ծածկեմ. շատ նիկացայ (վրդովուեցի) ամա ինչ պտէի անիլ. իշխանաւոր էր. ասում էր. պտի սուս կենայի: Վերջը երբօր խօսքը կտրեց, ասեցի, հայր սուրբ. ծառայ եմ կարգիդ. իրաւունք կտան որ խօսեմ. — հա, խօսիր, ասեց. թէ քեզ արդարացնելու բան ունիս, ասա — էն ա ես էլ էս առական ասեցի: Մին անգամ, հայր սուրբ. ասեցի, մօլա Նասրադինի կնիկը գնում ա շահին գանգատում, թէ շահըն ապրած կենայ. իմ մարդը ինձ կուշտ փորով հաց չի տալի, ինձ հմար շոր չի առնում. այ, տեսնում ես, տկլոր եմ, ասում ա, էս եմ, էն եմ, հօ զիտաս, կնիկը

որ սկսեց խօսիլ, էլ տազ չի անիլ (չի լուի)։ Չահր բարկանում ա, ու էն սհաթին ֆարրաշ դրկում, մոլլա նասրադինին բերել տալիս։ — Էյ մոլլայ, ասում ա, նէ իւշուն արվիւնայ խօրակ ալմրսան—հրամանդ թուրքերէն գիտմա, խօսքն ընդհատելով հարցրեց քահանան Պետրոսին։

— Ոչ, լաւ չեմ հասկանում, պատասխանեց վերջինս։

— Լաւ, քեզ հայերէն կասեմ. ամա հայր սուրբին թուրքերէն պատմեցի. — հա, ասում ա. այ մոլլա, խօսի կնկանդ հմար կերակուր չես առնում որ մի կուշտ ուտի. խի նրա հմար մի քանի ձեռք շոր չես առնում, որ մինը մաշելուց, մէկէլը հագնի։ Մոլլան պատասխանում ա. — Չահն ապրած կենայ, ասում ա, դրա հմար օխտը մանի (պատճառ) ունեմ — Որն ա օխտը մանին. մէկ մէկ ասն, հրամայումա շահը. — առաջինն էն ա, ասում ա մոլլան, որ ջէբումս մի շահի փող չկայ. երկրորդը... — մնացած վեց մանին գլխիդ տուած, ասում ա շահը. կորի գնա։ Հմի դուն ես, ասեցի, հայր սուրբ, ախար փող որ չկայ ես նրդիան արբէշում աղլուխ առնեմ. նրդիան դառ ճոթ գտնեմ. եա չէ, մնց դուխաբոր մալականը վեր ունեմ տեղն օրինաւոր Քրիստոս դնեմ. Խի, ասում ա հայր սուրբը, էսքան ժողովուրդ ունես, չես կարում մընին մին աղլուխ առնել տայ, մընին մի դառ ճոթ. եա չէ խի Վէտունց Օարգսի տղին չես գրում, հրէն Թիփլիզ նստած ա, մին լաւ Քրիստոս առնի զրկի։ Ասում եմ, հայր սուրբ, ծառայեմ քէ, ախար «էն վաղ էր որ էշը կաղ էր», հրմի էլ ո՛վ ա տէրտէրի խօսքին եաշում (նայում), էլ նրդիան ա հաւատ մնացել, բարեպաշտութիւն մնացել. առաջ, դրուստ ա, քահանաներն ին ժողովրդին պլօկում, ամա հրմի ժողովուրդն ա քահանի վրէն ընկել ուզում ա հագի փարաջէն հանի, եա չէ, գլխի գողկը թուցնի։ Մի կտոր հացը որ ուտում ենք, հետք գիտում են թէ՛ հարամ ա. տեղից վեր կացողը մեր գլխին ա բոմփում (խփում), էլ չեն ասում թէ՛ ինչ ենք տուել էս խեղճերին՝ որ էսքան պահանջում ենք։ Հիմի, ասում եմ, էս այամումը (ժամանակում) որ եղբայրն ուզում ա եղբօրը խեղդի, որդին ուզում ա հօրը ծախի, մարդ կարն բարեգործութենի անուն տայ։ Հայր-սուրբը տեսաւ

որ դրուտ եմ ասում, էն ա սուս կացաւ:

— Նրմի դու ես, որդի, դարձաւ քահանան Պետրոսին, ասում ես ըստի բազ շինի, բաղչայ շինի: Խօսք չունեմ, լաւ ես ասում. ամա պրտի էն էլ մտածես թէ էս քեա սիր դէրը իրդիան էտունը անի: Ախար ըստի հող փորի, լու, ծառ տնկիլու, չափար (ցանկապատ) քաշիլու հրմար փոզ ա հարկաւոր թէ ոչ: Ես ես փող իրդիան գլծնեմ: Ես չէ, փող որ ունենամ խի բզհնց պտտարի բաների կտամ, հրէն այ խոջա Մարութը թումանին երեք շահի շահ ա տալիս. ասում ա, ա դէր, թէ որ հարիւր մանէթ բիրես, քիզ տարին տասնութ մանէթ շահ կտամ: Ծա. սրնութ մանէթը գիզաս, մի տուն քիւլփաթ կրկառավարի. ամա հարիւր մանէթն ինձ ուլ ա տուել:

— Երէկ դու ինձ համբուրութիւն էիր քարոզում. զարձաւ ընկերս դէպի ինձ ուստիէն լեզուով, այժմ ա. սա, լսնորում եմ. ինչպէս անեմ որ չ'հայհոյեմ այս մար գուն:

— Հայհոյել. ինչո՞ւ համար, հարցրի ես զարմանալով:

— Ինչպէս թէ ինչո՞ւ. մի թէ քեզ չե՞ն զայրացնում սրա առարկութիւնները:

— Բնաւ:

— Եւ ոչ էլ այն, որ նա տոչորում է հարիւր բուբ ունենալու և այն շահացնելու տենչով:

— Եւ ոչ էլ այդ:

— Դու ինձ վրդովեցնում ես:

— Եթէ արդարութեամբ մտածես, չես վրդովուիլ: Քահանան մեղաւոր չէ՞ որ տգէտ է այդ աստիճան:

— Բայց հօ մեղաւոր է, որ տգէտ լինելով՝ դիմել է քահանայութեան:

— Ոչ էլ այդ դէպքումն է մեղաւոր: Մարդուն հայ էր հարկաւոր, և ահա այդ հացը ձեռք բերելու համար նա ընտրել է քահանայութիւնը:

— Բայց ախար նա իրաւունք չունէր:

— Իրաւունք ճանաչելու համար, մարդ, նախ և առաջ, տգէտ չի պիտի լինի: Մի թէ դու կարող ես իրաւունքի տեսակէտից մեղադրել քո եղին. եթէ նա հարևանի բակում փափուկ խոտ տեսնելով՝ մօտենայ և ուտէ: Այդ դէպքում

յանցաւորը ոչ թէ եղը, այլ դու կլինիս, որ չես կապել անբանին, կամ թէ քո հարեանը՝ որ չէ փակել իւր դուռը:

— Այդ ասելովդ մենք ուրեք ենք:

— Դու եպիսկոպոսն ես, որ ձեռնադրել ես տէր-Մակուչին, իսկ հարեանդ՝ ժողովուրդը, որ իրեն յանձնել է նրա ձեռք:

— Էդ խօսմ ինձանից էք խօսում, մէջ մտաւ քահանան, դէ հայեվար խօսեցէք, ես էլ հասկանամ:

— Այո, տէր հայր, քեզանից ենք խօսում, պատասխանեց Պետրոսը:

— Բա ինչ էք խօսում:

— Ասում ենք վայ այն ժողովուրդին, որի քահանան տէր-Մակուչն է:

— Խի էք ըդենց ասում, որդի, հարցրեց քահանան այնպիսի մի ճնշուած ձայնով՝ որ ես խղճահարուեցայ:

— Որովհետեւ դու տգէտ ես, պատասխանեց Պետրոսը կոշտ սառնասրտով թեամբ:

— Այդ արդէն չափազանց է, պարոն, նկատեցի ես կամացուկ կ'միկնոյն ժամանակ, վրդովուելով:

— Ընդհակառակը, դեռ քիչ է, յարեց Պետրոսը և ապա դառնալով քահանային հարցրեց. — Դու նեղանում ես որ ես քեզ տգէտ եմ ասում:

— Խի եմ նեղանում, որդի, ջահիլ ես, ասում ես. որ ահիլ (հասակաւոր) լինիս կմտածես թէ՛ էս մարդն ինչ մեղաւոր ա որ աստօժ սրան անուսում ա ստեղծել:

— Ինչո՞ւ. Աստուած որին է ուսումով ստեղծել:

— Ո՞նց թէ որին. այ, մինը հէնց քեզ, մինն էլ բուքնկերին. հրէն քաղաքն էլ լիքն ա ձեզ նմաններով:

— Մենք էլ քեզ պէս անուսում ենք ծնուել, բայց յետոյ մեծանալով, աշխատել ենք, չարչարուել և ուսում առել:

— Խի ես ըդեն, ասում, Պետրէ-ջան, մէջ մտաւ մեր հիւրընկալը. — թէ որ բու հէրը, Ակոբ աղան չլլէր, դու ոնց կարիր յուսում առնիլ:

— Այ, բու հօրն ողորմի, ա Մուք, մի բտենց խօսա՛ է, տեսնում ես բու դէբրին նեղն են լծել, քաջալերեց քահանան գիւղացուն և ինքն էլ, կարծես, սիրտ առնելով դարձաւ Պետրոսին:

— չի՛, էստուր ի՛նչ պատասխան ունես, դէ տուր:

— Ի՞նչ պատասխան պիտի ունենամ: Իմ հայրը, ի հարկէ, վճարել է իմ ուսման վարձը, բայց ես էլ հօ աշխատել ու չարչարուել եմ, օրերս պարապ չեմ անցրել:

— Դէ լաւ, հմի լսիր, քո հերը փող ա ունեցել, քեզ կարդացրել ա. բա իմ հերը որ փող չուներ, սր դիան կարդացնէր: Ինքը մի խեղճ նախրապան ա էլէլ. քարով, կարկուտով (մեծ դժուարութեամբ) մի կտոր հաց ա ճարել մեզ ուտացրել, մի գազ կտաւ ա գտել, ծակել, մեր ճիտը գցել. վերջն էլ հանդուժը շատ բաց պարկեւուց, արևի ու անձրևի հետ կռուելուց ու հազար ու մի շարքաութիւն անելուց հիւանդացել, մեռել ա ու մեզ էլ անտէր, անտիրական թողել: Աստօժ ա իմանում թէ մենք ու մեր խեղճ մերը ի՛նչ օրեր ենք տեսել, ի՛նչ նեղութիւններ ենք քաշել: Մեր ամեն մի թիրքա հացը լեղի ու արտասուք ա էլէլ: Դժար բան ա աղքատութիւնը, էն էլ գեղի միջումը. Աստօժ ոչ շհանց տայ ձեզ...: Հմի. սրդի, ես որ էն խեղճ դրութեամբ էսքան էլ ա գրաճանաչ եմ դառել, գրել, կարդալ եմ սովորել, բանի տարի վանքումս տիրացութիւն արել ու վերջը էս մենձ գեղի վրայ քահանայ դառել, էս քիչ բան ա: Թէ որ մինը քեզ վրայ խարջած փողն ինձ վրայ խարջէր, ո՛վ գիդա, հրմի փիլիսոփայ կլէի դառած: Ամա դու, տեսնում ես, ըսկի մարիփաթին (քաղաքավարութեամբ) խօսալ էլ չես սովորել: Կբաշխես, որ էս խօսքը երեսիդ ասում եմ. ամա ես քո հօր տեղն եմ. հախկ (իրաւունք) ունեմ: Ընչի՛ հմար եմ ասում, գիտանս. այ, դու դարիք (օտար) տղայ ես, եկել ես մեր գեղը. ես էլ ըստեղի քահանան եմ. շնորհակալ եմ, մեծ ու պստիկ պատում են: Բայց ես, ոնց որ Քրիստոս ասում ա, որ խոնարհեցցէ գանձն, բարձրացցէ. ես էլ խոնարուեցի, եկայ որ բարի գալուստ ասեմ ձեզ, ու օրհնեմ. ամա դու, իմ գեղականի առաջ, ինձ անպատիւ արիր: Ասում ես վայ էն գեղին որ դու չրա քահանան ես. ասում ես դու տգէտ ես. քիչ ա մնում որ ասես թէ հայվան ես: Ախր ըսենց չեն խօսիլ, սրդի. աշխարհում մինը տգէտ կըլի, մինը յուսումնական. մինը աղրատ կըլի, մինը հարուստ. ամա, բոլորի Աստօժը

մէկ ա՛ռ ոչ հարուստն ու յուսումնականը պիտի հմպարտանան, ոչ էլ տղէան սւ աղքատը ոտի տակ ընկնեն: Ի՛նչ մեղքս ծածկեմ, սրդի. առաջ մի քիչ դարդ էի անում որ Վեդունց Սարգսի խօսքին լսեցի ու որդիրս յուսման չզրկեցի: Ամա հմի վառք իմ տալիս Աստծուն՝ որ չեմ զրկել չուն (որովհետև) տեսնում եմ որ յուսումը մարդին հրեշտակ շինելու տեղ՝ սատանայ ա շինում: Դէ որ բղենց ա, աղբէր, խի՛ եմ յուսման զրկում որ վերջը փոշմանեմ:

Տէր հօր վերջին խօսքերը տպաւորութիւն արին Պետրոսի վրայ և նա լռեց: Բայց ես, բահանայի սիրտը ամոքելու համար, կամեցայ խօսակցութիւնը մեղմով վերջաւորել, ուստի հարցրի.

— Դու, ուրեմն, որդիներ ունիս:

— Ո՛նց չէ. չորս հատ, պատասխանեց երէցը, կարծես պարծենալով:

— Հասակահոր են նրանք:

— Մենծը քսան ութ տարեկան ա, մնացած երեքը մինը մնից էրկու էրկու տարով պակաս են: Չորսն էլ ածդահա տղամարդիկ են: Էրկուսին պակակել եմ. էրկուսին էլ. թէ որ Աստոծ յաջողի գեալաջալ (գալ տարի) պտի պակեմ:

— Չորսին էլ ուրեմն անուսում ես թողել:

— Չէ, վանահօր մօտ քիչ ու միչ կարդացել են. ընենց որ իրանց բանը եօլայ կտանեն:

— Դու, ուրեմն, չէ՛ր կարող գոնէ քաղաքի դպրանոցը ուղարկել նրանց, կրկին մէջ մտաւ Պետրոսը և այս անգամ, արդէն, գրգռուած:

— Ինչո՛ւ չէի կարող:

— Բաս ինչո՛ւ չուղարկեցիր, մեղք չէ՞ որ չորս ածդահա տղամարդ, ինչպէս ես դու նրանց անուանում, անուսում ես թողել:

— Ընդուր որ... ամա չէ, ըտոր մասին էլ Վեդունց Սարգիսը կասի:

Տէրը հայրը դիտմամբ խոյս տուաւ Պետրոսին պատասխանելուց, որպէս զի նորէն վէճի չբռնուի նրա հետ:

— Ո՛վ է Վեդունց Սարգիսը. հարցրի ես:



- Հրէն, այ, տունն ընդի ա. էն մենժ մենժ շինա-
րուցը տակին, ասաց բահանան ցոյց տալով զիւղի նա-
բաւակողմը, ուր մի ընդարձակ դարեանդի վրայ բարձ-
րանում էին մի խումը գեղուղէշ սօսիներ:

- Որդիքը քօնն են, ինչո՞ւ դու չես բացատրում թէ
ինչո՞ւ ես նրանց անուտում թողել, հարցրեց Պետրոսը:



- Որդիքն իմն են, ըտե՞նց ա, ամա Սարգիսն էր
սարաբ (պատճառ) որ նրանց սւաման չղրկեցի ես: Այ,
թէ ուզում էք, գնացէք, հարցրէք, նա խելօք մարդ ա.
սուտ չի խօսիլ: Ղորդ ա, գեղացի ա, ամա հարիւր բա-
ղաբացու խելք ունի գլխումը: Հարցրէք, նա ամեն ինչ
տեղն ու տեղը կասի: Դէհ, շատ խօսեցի, որդիք. գլուխ-
ներդ ցաւացրի. կրախշէք, հըմի ես գնամ. բարով էր ե-
կել, բարով էլ դնաք...

Այս ասելով՝ տէր հայրը ողջունեց մեզ վերջին տն-
դամ և երեսը դարձնելով ծանրաբայլ հեռացաւ:

Գ.

Ցանկանալով շարունակել մեր պտոյտը, մենք իջանք
դէպի ձորակն, ուր հոսում էր զիւղի լեռնային վտակը:
Չնայելով ջրի փոքրութեան, նա շարունակ խոխոջում,
աղմուկ էր հանում, որովհետև իջնում էր աստիճանաւոր
զահաւանդներից, որոնցից իւրաքանչիւրը, առանձին ա.
ուած, ներկայացնում էր մի գեղանկար պատկեր: Ղտակի
ափերը բերելով՝ մենք հետզհետէ դիտում էինք այդ պատ-
կերները և զուարճանում: Մի տեղ ժայռերը միմեանց
վրայ կուտակուած, փորձում էին, կարծես, վտակի հո-
սանքն արգիլել. իսկ սա աւաղով ու խճով նրանց
խորշերը լցած՝ իւր փրփրուն ալիքները զահավիթում էր
ժայռերի բարձունքից: Մի ուրիշ տեղ մոշնին, վայրի
վարդը, կամ նունենին գետակի կրկին արեւը զբաւած՝ ի-
րենց ճկուն ոտերը դէպ իրար ձգելով և իրար շաղա-
պատելով՝ կազմում էին ջրի վրայ կանաչազարդ մի կա-
մուրջ և այդպիսով հոսանքը մեր աչքերից ծածկում: Մի
երրորդ տեղ ուռենին՝ կանաչագեղ ոտերն աջ ու ձախ
տարածելով՝ հովանաւորում էր մի փոքրիկ ու վճիտ լճակ,

1789 291



որի շուրջ, կարծես, կարկաչելուց յոգնելով՝ հանդստանում էր այդտեղ և իւր ջինջ հայելու մէջ արտացոլում թէ՛ գեղուղէշ ուռնին, թէ՛ ժայռերն ու թուփերը և թէ՛ երկիրի կապուտակը:

— Տէր Աստուած, ինչո՞ւ մարդիկ այս գեղազուարճ վայրերը թողած՝ շնչատարտ են լինում աղականութեամբ լի քաղաքներում: Մի՞թէ նրանցից ամեն մէկի համար չի գտնուիլ վայելչութեան մի անկիւն այս ազատ լեռների մէջ, այս սիրուն ջրերի ափին, այս կապուտակ երկիրի տակ, բացազանչեց ընկերս շրջապատող տեսարաններից դմայլուելով:

— Իսկ զու կարծում ես թէ բնութեան այս գեղեցկութիւնները անազարտ կմնային եթէ մարդիկ հաստատուէին այստեղ, հարցրի ես նրան:

— Բնութեան գեղեցկութիւնները... ինչո՞ւ չէ, ո՞վ կազարտէր նրանց:

— Նոյն ինքը մարդը: Նա չի կարող ապրել՝ առանց այդ գեղեցկութիւններն եղծանելու, առանց իւր շուրջն աւեր ու աղականութիւն սփռելու: Ընդհակառակն, աւելի լաւ է որ մարդկանց մեծամասնութիւնը խռնուած է քաղաքներում. այդպիսով, գոնէ, բնութիւնը աւելի բիշ է տուժում և նրա գեղեցկութիւններն աւելի բիշ են ազարտւում. խիստ դրանցով դմայլիլ գիտցող սակաւաթիւ արարածների համար՝ բնութեան մէջ տակաւին մնում է մի բան, որն այդ սակաւաթիւները կարող են վայելել:

— Դու իրաւունք ունիս... պատասխանեց ընկերս՝ մի փոքր մտածելուց յետ. — մարդը, արդարև, բնութեան եղծանիչն է. ի զուր են կեղծաւորները «բնութեան զարգ» անուանել նրան. իմ կարծիքով խողը աւելի բիշ է վնաս պատճառում բնութեանը քան մարդը: Ինչ ես կարծում, Մուքի, դարձաւ ընկերս հիւրընկալին — եթէ վեց ամիս շարունակ հարիւր խող պահէիք այս ձորում, նրանք շուտ կըփչացնէին այս տեղերը, թէ՛ եթէ այդքան ժամանակում հարիւր մարդ ապրէր այստեղ:

— Յէր օրհնած. խոզն ինչ ա, որ ինչ վիշացնի. պատասխանեց գիւղացին ժպտալով. — Նա մի խեղճ հայկան ա. թէ՛ կաթուկից, բանից գտաւ կուտի, թէ՛ չէ, էնա սաղ

օրը խոխոռալով ման ա գալու ու իրա համար արածի. ծառը չի պոկելու, քարը չի շուռ տալու: Ամա թէ որ հարիր մարդ ապրի ըստեղ, վեց ամիս չէ, վեց շաբթու-մըն էլ վերանայ (աւերակ) կանի սաղ ձորը: Քոյերը կը-րակ կտայ, ծառերը կ'իտորատի. կանաչը կը մուռտառի (կապականէ), ես սր մէկն ասեմ:

Այսպէս խօսակցելով՝ մենք անցանք ուրիշ կողմեր, դիտեցինք հինաւուրց ջրաղացը՝ իւր հնատարազ շէնքով ու կազմութեամբ. պտտեցինք գիւղացւոց մի քանի պար-տէզները, որոնք ընկած էին դետի տափարակի ուլլու-թեամբ. դիտեցինք դրանց մէջ գտնուող մեղուանոցները, իրենց հնաձև, շագախապատ փեթակներով, և վերջապէս, նորէն շրջան առնելով՝ բարձրացանք դէպի գիւղը:

— Երէկ, յիշում ես, երբ արևը այրում էր մեզ, ա-հա, այս սօսիներին էի ուզում հասնել, սկսաւ խօսել Պետրոսը՝ երբ մօտեցանք մենք այն բարձրավանդակին, որի վրայ բահանայի ցոյց տուած սօսիներն էին բարձ-րանում, — այժմ էլ բաւական յոգնած ենք, անցնենք այս լանջիվերբ և հանդստանանք այդ սիրուն ծառերի տակ:

— Անցնենք, ասացի ես և ապա դառնալով մեր հիւր-ընկալին՝ հարցրի. — սրինն են այդ սօսիները:

— Սօսին սրն ա:

— Ա՛յ, այս ծառերը:

— Բա էդ չընար ա, դու խի՞ սօսի ես ասում, հարց-րեց նա:

— Հայերէն չինարին սօսի կասեն, բացատրեցի ես:

— Որ ընտենց ա, բաս չընարը թուրքերէն ա:

— Այո, հաստատեց ընկերս:

Գիւղացին գլուխը շարժեց և ապա նորէն դառնա-լով մեզ՝ հարցրեց.

— Էս վար մենք չընարու անունն էլ հայեվար ասե-լը գիտում չենք, մեր ճարն ի՛նչ կլի, հաւատաս քանի կենանք էնքան էւելի հայվան դառնանք:

— Ինչո՞ւ, բարեկամ, մի բառ չիմանալով՝ մարդ հայ-վան կդառնայ, հարցրի ես ժպտալով:

— Աղբաթիխէր, էս օր մի բառը կմոռանանք, է-գուց էրկուսը. գալ օրն իրէքը. մին էլ էնա կտեսնես որ

խօսքի կէսը հայրեվար ենք խօսում կէսը թուրքեվար։ Մարդ որ իրա ազգի լեզուով խօսիլը գիտա ոչ՝ հայվան չի, բաս ինչ ա։

Ընկերս նայեց ինձ վրայ խորհրդաւոր հայեացքով և հարցրեց.

— Ի՞նչպէս ես գտնում այս գիւղացու կարծիքը.

— Չատ բանաւոր, պատասխանեցի ես. ապա Մուրիին դառնալով նկատեցի, — ինչո՞ւ չասացիր թէ՛ ումն են պատկանում այս սօսիները.

— Էս սօսիքը Վեդունց Սարգսինն են, պատասխանեց նա.

— Հոպա նրն է նրա տունը, հետաքրքրուեցայ ես.

— Հրէն, այ, ծառերից դէնը. կտուրն ըստիան էրեւում ա, ցոյց տուաւ գիւղացին.

— Ա propos, այդ Վեդունց Սարգսից մի հարցնենք թէ՛ ինչո՞ւ է բահանային արգիլել իւր որդիքը ուսման դրկելու, խօսեց Պետրոսը.

— Անշուշտ կհարցնենք, երևի մի պատճառ կունենար. բայց նախ հանգստանանք այս սիրուն ծառերի տակ, յարեցի ես.

— Լաւ կըլի, գնացէք. էդ ծառերի տակը որ նրստէք կմխիթարուէք. ես էլ մի մեր գիւմովն (գոմովն) անցնեմ, էլ շուտ եզ կգամ տուն, ասաց հիւրընկալը.

— Գու ուրեմն շէս գալիս մեզ հետ, հարցրեց բնկերս.

— Չէ, ձեզ մատաղ. էս անգամ դուք մենակ գնացէք, պատասխանեց գիւղացին և ճանապարհը ծռեց.

Ըստ երևութին, նա չկամեցաւ ընկերանալ մեզ, վախենալով թէ՛ մի գուցէ Պետրոսը դարձեալ իւր անտակտ հարց ու փորձով ամաչեցնէ իրեն Վեդունց Սարգսի առաջ, որի ով լինելը, սակայն, մենք չգիտէինք.

Երբ այս մասին իմ կարծիքը յայտնեցի Պետրոսին, նա ուսերը թոթոռելով ասաց.

— Չատ կարելի է... բայց և այնպէ՞ս նա ինչո՞ւ պիտի ամաչի. եթէ ես, մինչև անգամ, շատ յիմար բաներ էլ խօսեմ:

— Կամաչի նրա համար, որ դու իւր հիւրն ես. Չէս խել հայկական առածը թէ՛ «գիժը չի ամաչիլ գժի տէրը կամաչի»:

— Պետրոսը յառեց աչքերը ինձ վրայ, կարծես, կամենալով հարցնել թէ՛ մի՞թէ ես այնքան անմտաբար եմ խօսում որ ամաչացնում եմ, նոյն իսկ, մի հիւրընկալ գիւղացու:

— Այդպէս է բարեկամ, շարունակեցի ես, անհամբերութիւնը մնատում է ամենքին իսկ ըեզ առաւել ևս: Խորհուրդ եմ տալիս՝ չշտապել երբէք կարծիքներ յայտնելու՝ եթէ գիտես թէ դրա համար ժամանակ ունիս դևու: Հին փիլիսոփաների պատուէրը՝ «քիչ խօսիր և շատ լսիր» ամենից աւելի դու պիտի կատարես:

— Այս անգամ պիտի աշխատեմ բոլորովին չխօսել, միայն թէ դու կարողանաս ինձ հետաքրքրող հարցերն առջարկել այդ գիւղացուն: Ճիշդն ասած, հս շատ եմ ցանկանում իմանալ թէ ինչո՞ւ նա իւր հարևաններին այդպիսի յետադէմ խորհուրդներ է տալիս: Ես շատ գիւղերում եմ եղել և միշտ էլ զրոյցներ եմ ունեցել գիւղացիների հետ. բայց ինձ երբէք չի պատահել հայ դեղջուկ, որ ուսման և կրթութեան դէմ խօսէր: Ընդհակառակն ամեն մի՞նի փափաղը եղել է այն՝ որ կարողանայ՝ ուսում տալ իւր որդուն: Եւ այդ՝ ես համարել եմ հայ գիւղացու ամենահամակրելի գծերից մինը: Այժմ ինձ թւում է թէ այդ Սարգիսը, որի մասին խօսում ենք, նախապաշարեսալ ապուշի մէկը պիտի լինի:

— Գու դարձեալ շտապեցիր քո կարծիքն յայտնել, առանց այդ մարդուն տեսած կամ լսած լինելու, նկատեցի ես:

— Ով որ իւր ընկերին խորհուրդ է տալիս՝ թողնել որդուն անուսում, նրան կարելի է ապուշ անուանել, նոյն իսկ սուանց նրան տեսած կամ լսած լինելու:

— Բայց կարող է, նա և, պատահել, որ այդպիսի խորհուրդ տալու համար՝ մարդ ունենայ մի բանաւոր պատճառ:

— Բանաւոր պատճառ... խելագարուել էս, լինչ է մի՞թէ կարելի է դրա համար բանաւոր սլատճառ ունենալ:

— Գուցէ այդ Սարգիսն ունի:

— Անկարելի է, Մի մարդ, որ պաշտպան է հանդիսանում տգիտութեան, նա չի կարող որ և է ուրիշ պատճառ ունենալ, բացի այն՝ որ կլինի ապուշ, կամ խելա-

գար: Իսկ այդ Սարգիսը եթէ ապուշ չէ, անշուշտ այն ցեցերից մինն է, որոնք այսպիսի անյայտ անկիւններում ապրելով՝ զուարճութիւն են համարում իրենց համար՝ ժողովրդի միտքն ու հոգին թունաւորելը: Մի՛թէ, արդարև կարելի է ուսման ու գիտութեան դէմ խօսել. այդ միևնոյն է, թէ ասես, եթէ խաւարը աւելի դիւրեկան է բան լոյսը:

— Երբեմն խաւարը ոչ միայն դիւրեկան, այլ և աւելի օգտաւէտ է լինում, նկատեցի ես ժպտալով:

— Լռի՛ր, լռի՛ր, խելքդ ցնդել է. լաւ է որ ոչ ոք չէ լսում մեզ. այդ իմաստութիւնը նրտեղից ես ամբարել... իրար կտնից վրայ տուաւ Պետրոսը:

— Տեսնո՞ր որ էլի շտապեցրիր:

— Հապա ի՞նչ ասեմ, մի՛թէ խաւարը երբ և իցէ կարող է դիւրեկան կամ օգտաւէտ լինել մարդուն:

— Իսկ եթէ մարդու աչքերը հիւանդ կամ վնասուած լինին:

— Այդ ուրիշ բան է. դու նիւթական լուսի ու խաւարի մասին ես խօսում: Չափազանց պայծառ լոյսը, այն, հաճելի չի լինում վնասուած աչքերին:

— Հոգւոյ ու մտքի աչքերն էլ երբեմն վնասուում կամ հիւանդանում են:

— Ուրեմն դրանց էլ հոգեկան կամ մտաւոր խաւարն է օգտում:

— Եթէ չէ օգտում, դէ՛թ, հանդատութիւն է բերում: Կան դեղեր, որոնք շեն բուժում սուր ցաւ պատճառող հիւանդութիւնը, բայց առ ժամանակ թմրեցնում են նրա պատճառած ցաւերը: Հիւանդն այդպիսի դեղը հաճութեամբ էր ընդունում:

— Այդ մէկի միտքը ես չեմ հասկանում:

— Այդ էլ, կհասկացնեմ Վեդանց Սարգսի կարծիքները լսելուց յետ:

Այսպէս խօսակցելով՝ մենք աւարտեցինք դարձիվերը և մօտեցանք սօսիներին: Դրանք հինաւուրց ծառեր էին, թուով մի բանի հատ, որոնք իրարից անջատ բուսած էին գիւղի վրայ իշխող այդ դարեանդի վրայ: Նրանց վիթխարի բունները բարձր ու զեղուղէշ բազուկներով և լայ-

Նատարած ոստերով՝ գրաւել էին հարթավայրի մեծագոյն մասը: Սաղարթախիտ ճիւղերի հովանին ծածկում էր ոչ միայն կանաչազարդ տափարակն ու դարնանդի լանջերը, այլ և Վեդանց Սարգսի տունը, որ գտնուում էր հարթավայրի արեգընդէմ կողմը, և արտաքինով զանազանում էր գիւղի հասարակ տներին: Նա առջևն ունէր ընդարձակ բակ, որի մի մասում դետեղուած էին դոմն ու հորթանոցը, իսկ ետեւին՝ պտղատու ծառերի մի պարտէզ, որ սուղուում էր լեռնալանջի կողմից խշնող մի առուակով:

Ի՞նչ հրաշալի հովանոց է, ճիշդ որ Աստուածաշէն, բացականչեց ընկերս և նստելով փոքրիկ կոճղի վրայ, որ դրուած էր սօսիներից մինի տակ իբրև նստարան, հանեց գլխարկը և ճակատի բրտինքը սրբելով՝ շարունակեց. — նստիր, բարեկամ, և բացատրիր ինձ թէ՛ ինչու «անտառի լաւ տանձը արջն է ստուում»:

— Ո՞ր տանձի և ո՞ր արջի մասին է խօսքդ, հարցրի ես, նստելով նոյնպէս կոճղի վրայ:

— Ահա՛, այս սիրուն հովանոցի, որ արժանի էր գեղանի մի իշխանուհու սեփհականութիւնը լինելու, բայց որ վիճակուել է մի ապուշ գիւղացու:

→ Մի գեղանի իշխանուհու... այն, իրաւունք ունիս, յարեցի ես ժպտալով, և, անշուշտ, այնպիսի իշխանուհու, որ նորատի լինէր, ընթոյշ և գեղահասակ, գրաւիչ դէմքով, կախարհող աչքերով և, մի և նոյն ժամանակ, անմեղձ լինչպէս հովտի շուշանը և կեանքով լի՛ ինչպէս զարնան առաւօտը...

— Գրանք արդէն աւելորդ մանրամասնութիւններ են:

— Հոգ չէ, լսիր: Եւ այդ գեղեցկուհին ապրում լինէր այստեղ հոյակապ գղեակի մէջ, շրջապատուած գեղանի նաժիշտներով: Եւ մի գեղեցիկ օր, դու քո որսորդական հագուստներդ հագած, որսողի մախաղն ու հրացանը ուսիդ, որսկան շունը ետեւիցդ ձգած՝ անուպաս կերպով յայտնուէիր այստեղ:

— Լաւ, կատակդ թող:

— Եւ տեսնէիր որ այս սօսիների հովանիում, շքեղ գահաւորակի վրայ՝ հանգստանում է դղեակի մանկամարդ տիրուհին և Մորիէոսն իւր քնաբեր թեւերով նինչ է սրբի:

ևել նրա գեղանի աչերին, իսկ լեռնից իջնող այս առուակը օրօր է երգում նրա ականջին... Դու, ի հարկէ, իսկոյն, հիացմունքից այլայլուած, յետ կրաշուէիր այս բնի ետևը և գողունի հայնացրով գիտելով գեղեցկուհուն՝ բեզ ու քեզ կասէիր. — «Օ՛, եթէ ես իրաւունք ունենայի չողի սրա առաջ և ալօթել...» Եւ ապա մտածելով որ դու այդ կարող ես անել՝ առանց գեղեցկուհուց տեսնուելու և նրանից նախատուելու, կշոգէիր և կաղօթէիր .. Քո այդ վարմունքը, ի հարկէ, կղարմացնէր քո շանր և նա իւր այդ զգացմունքը արտայայտելու համար՝ կսխտէր հաջել: Այդ անսպաս ձայնից կղարթնէր գեղեցկուհին և տեսնելով բեզ իւր առաջ ծնկաչոզ, բարկացայտ ձայնով կբացագանչէր. — «Մ՛վ ես դու, յանդուզն արարած, որ համարձակում ես խանգարել իմ մինաւոր հանդստութիւնը»: Եւ մի ակնթարթում դուրս կթափուէին գրեակից նաթիշաներն ու ծառաները և սլարանով կապկպելով բեզ, կառաջնորդէին դէպի գրեակի դնդանը...

— Լաւ, բաւական է.

— Սպասիր վերջացնեմ, — Յետոյ մի սիրուն օր գեղանի իշխանուհին իւր սլարտիզում դբօսնելիս կլսէր որ մինը երգում է իւր դնդանում մի շատ տխուր, բայց հրաշալի երգ: Նա յանկարծ կմտաբերէր. բանտարկեալ որսորդին, բերել կտար նրան իւր մօտ և մանրամասն հարցաքննելով կիմանար որ դու չոգել էիր իւր առաջ ոչ թէ իրեն անարգելու, այլ սլաշտելու նպատակով: Ապա քո արկածներով լի անցեալի պատմութիւնը լսելով կը դորովուէր բեզ վրայ, կսիրահարուէր և հետդ ամուսնանալով՝ իւր սրտի և գրեակի իշխան կկարգէր բեզ.

— Ինչո՞ւ համար է, վերջապէս, այդ ռոմանտիք կատակը, հարցրեց ընկերս, այս անգամ, արդէն, բարկանալով:

— Նրա համար որ դու և բեզ հետ էլ շատերն այն երիտասարդներից, որոնք, իրենց ասելով, գիշեր ու ցերեկ ժողովրդի ցաւերը վարմանելու վրայ են մտածում, որոնց մշտական զրոյցը գիտութեան վերջի խօսքի, բարձր գաղափարների և ազատ մտքերի համար է լինում, չեն կարողանում հանդուրժել, երբ տեսնում են որ՝ խեղճ արջին

մէկը անտառում գտել է մի տանձ և ուտում է. շնն կարողանում ներել, որ այս սիրուն սօսիները պատկանում լինին մի խեղճ գիւղացու և ոչ թէ մի գեղանի իշխանուհու: Կարծես բաւական չէ, որ այդ իշխանուհի կոշուածները և՛ գեղեցիկ են, և՛ հարուստ, և՛ բազմից գուրգուրուած, դեռ նրանք պէտք է տիրեն, նաև, երկրագնդի բոլոր գեղեցիկ անկիւններին: Գոյ արդեօք այդ խօսքի մէջ խելք, արդարութիւն, կամ ազատ մտածութիւն, որով սիրում էր դուք ամեն տեղ պարծենալ:

— Սպասիր, բարեկամ, դու ինձ շնտակացար, հետեւապէս և իմ վերաբերմամբ արած գիտողութիւնդ անտեղի է: Ես, ի հարկէ, միշտ կցանկանամ որ երկրագնդի վրայ գտնուած լաւագոյն անկիւնները, պարարտ հողերը, պլտդաբեր հովիտները և այլն պատկանեն միայն խեղճերին, ճակատի քրտինքով ապրողներին և ոչ թէ բազմից երես առած մարդկանց: Սակայն սօսիների մասին ասածս բացառիկ նշանակութիւն ունէր, հետևապէս և դու ուրիշ կերպ պիտի հասկանայիր: Ես ուզում էի ասել թէ՛ որովհետև Վեդունց Սարգիսը մի խաւարամիտ և ուսման ու գիտութեան վէճ խօսող ու գործող մարդ է, ուրեմն շարժէ որ այս գեղավայրը պատկանէ նրան:

— Լաւ, հնթադրենք թէ այդպէս է, հապա ինչո՞ւ շատացիր թէ՛ լաւ կլինէր որ այս սօսիները պատկանէին մեր հիւրընկալ Մուրիին, կամ մի ուրիշ, քո կարծիքով աւելի ուսումնասէր, գիւղացու. այլ ցանկացար որ նա լինի մի գեղանի իշխանուհու սեփականութիւն:

— Ասացի հէնց այնպէս, առանց մտածելու:

— Ուրեմն ասել ես աւելի անկեղծօրէն քան կարող էիր ասել՝ եթէ մտածէիր: Առաջին դէպքում դու արտայայտել ես քո իսկական զգացմունքը, մինչդեռ երկրորդ դէպքում պիտի աշխատէիր վարագուրել այդ զգացմունքը և ասել այն ինչ որ, առհասարակ, ընդունուած է ասել լուսամիտ և ազատախոհ երևալու համար:

— Ո՛չ, հազար անգամ ոչ:

— Այո, հազար անգամ այո: Ինձ համար նշանակութիւն ունի այն, ինչ որ առացիր առանց մտածելու: Մի աշխատիր արդարանալ: Դրանով միայն ծանրագնում ես

յանցանքդ: Թէ դու և թէ նրանք, որոնք հրապարակին ազմկում են արդարութեան և ազատամտութեան անու- նով. ստում էք միշտ ու կեղծում: Եւ դուք մեղաւոր չէք: Մի ժողովուրդ, որ մօտ հազար տարի ապրել է ստրկա- կան կեանքով, շի կարող ծնել այնպիսի որդիք, որոնք ազատ մտածելու հետ միասին՝ կարողանային, նաև, ա- զատ գործել: Ազատամտութեան գլխաւոր յատկանիշը այն է՝ որ նախ՝ ներողամիտ աչքով նայես ընկերոջդ թե- րութեան և սխալանքներն Վրայ. երկրորդ՝ ցանկանաս որ նա ևս վայելէ այն բարիքները, ինչ որ դու վայելում ես, կամ կցանկանայիր վայելել, և երրորդ՝ որ նրան էլ ի- րաւունք տաս խօսելու կամ գործելու այնպէս, ինչպէս որ դու ես խօսում կամ գործում: Բայց ձեզանից քանի- սի մէջ կարելի է գտնել այնօրինակ ազատամտութիւն: Թուրքը մի լաւ առաջ ունի, որ ասում է՝ «կաթի հետ մտածը՝ հոգու հետ դուրս կգայ», Այս ճշմարտութեան մենք հանդիպում ենք ամեն քայլափոխում. թէ ինչպէս, բացառիկ: Մեր խօսքն ու գործը, առ հասարակ, չեն յարմարում իրար: Խօսքն առաքինական է, գործը՝ մոլե- կան: Ներքուց ենք կարդում ազատամտութեան և արդա- րութեան համար, բայց առանց խղճահարուելու բռնա- նում մեր մրցակցի վրայ և կամ ընկերի իրաւունքը յա- փշտակում: Դրուատում ենք գութն ու բարեգործութիւնը, և սակայն առանց ամաչելու, հանում մեր եղբօր վերջին շապիրը, առարկելով թէ դա մեզ է պատկանում: Ինչո՞ւ է այս այսպէս: Նրա համար որ «կաթի հետ» միասին ստրկութեան, բռնութեան և արդարութեան շատ սաղ- մեր մտել են մեր արեան մէջ և նրանք միայն մեր «հո- գու հետ պիտի դուրս գան»:

— Դու չափազանցում ես:

— Զեմ չափազանցում, այլ ասում եմ ճշմարտու- թիւնը: Եւ այդ դէպքումն էլ, ինչպէս, ասացի, անպայ- ման շեմ մեղադրում ոչ բեզ, ոչ րո նմաններին: Ի դուր է աշխարհը հայհոյում հրէաներին, թէ նրանք չեն պա- րապում ծանր աշխատանքով, թէ նրանք երկշոտ են, խաբող, վաշխառու և այլն: Այդ հօ իրենք չեն այդպէս արել իրենց, այլ աշխարհի բռնապետութիւնը: Եթէ այս-

օրուայ հրէան փախչում է աշխատանքից, այդ նրա համար է՝ որ նրա երակներում դեռ վազում է եղիպտացուց ազիւնէ գործարաններում շարաշար աշխատող հրէայի արիւնք։ Եթէ նա ստում է ու թաղցնում, այդ նրա համար է՝ որ հրէական արունները խեղդող Փարաւոնի և Երուսաղէմի դերեախներն այրող Նաբուզոդոնոսորի ներշնչած սարսափը դեռ հալածում է նրան։ Եթէ նա խնամում է և պինդ է բռնում ոսկու քսակը, այդ նրա համար է՝ որ նոյն ոսկու դօրու թեամբ հին բռնակալների կատաղութիւնը մեղմող և խարուկահանդէսների կրակը մարող հրէաների հոգիները դեռ շնջում են այսօրուայ հրէայի ականջին թէ՛ «ոսկու մէջ է միայն քո փրկութիւնը»։ Այս տեսակէտից էլ կարող ենք նայել մեր բարոյական շատ թուլութիւնների վրայ։ Եթէ իրաւ է որ դարերի ընթացքում մեր հայրերն հեծել են անլուր բռնութիւնների տակ և նրանց թողնելն ու թողնորդիւնները շարունակ ծառայել անիրաւութեամբ ու անարդարութեամբ իշխող բռնակալների կամքին, ինչն և պիտի զարմանանք եթէ նրանց օրդիներից մինը, թէկուզ Պետրոս Մինարեան անունով, այնքան մեծ նշանակութիւն տայ իշխանին, կամ իշխանունուն, որ մինչև անգամ ցանկանայ՝ Վեդունց Սարգսի սօսիւնները յատկացնել նրանց։

— Եթէ իմանամ թէ իմ մէջ լսօսել է ստրկամտութեան հոգին, յուսահատութիւնից ինձ կսպանեմ։

— Ինչն ևս յուսահատում, դու հօ մենակ չես. քեզ նման հազարաւորները կան։ Բացի այդ, ես քեզ կարող եմ մխիթարել, նաև, մի ուրիշ բացազրութեամբ։ Այդ այն է՝ որ մարդ արարածը, որքան էլ որ զարգանում և զիտութեան լուսով լուսաւորում է, այսուամենայնիւ նա իւր մէջ դեռ կրում է այն հին մարդի բնազդումները, որ վայրենութեան դարեշրջաններում ապրելով՝ վախենում էր փայլակից ու օրօտից, որ ստեղծում էր իւր համար դերբնական և անտեսանելի ոյժեր ու նրանց հրկրազգում ու զոհում։ Այն ժամանակներից սկսած՝ մարդը սովորել է հպատակել գերազանց ուժին և նրա վրայ նայել հիացմունքով։ Այդ հպատակութեան ու հիացման մէջ նա գոհութիւն է գտնում և շատ տկարամտներ մինչև անգամ

անհանգստանում են, երբ տիրող, կամ բռնացող սլոբ վերանում է մէջ տեղից. Այդ առաջ է գալիս նրանից, որ տկարամիտը վախենում է թէ մի գուցէ աղնուատոհմ գաղանի տեղը բռնէ իրեն հաւասար մի ոչխար... Ես տեսել եմ զարգացած և, ինքն իրեն ազատախոհ համարող մարդ, որ դառնացել ու սրտմտել էր՝ իմանալով որ սեպհական աշխատասիրութեամբ յառաջադիմող անտոհմիկ մի գաւառացի գնել է Թիֆլիսում՝ անհաշիւ շուայութեամբ հօր գոյքը վատնող մի իշխանի կալուածքը: Նա սրտմտում էր ոչ թէ նրա համար՝ որ իշխանը շուայտ էր կամ անառակ, այլ նրա համար որ անտոհմիկ գաւառացին տիրում է իշխանական կալուածքին: Ուրեմն զարգացած մարդը չէր մեծագրում աշխատասիրութիւնն ու գործունէութիւնը, որովհետեւ նա այդ տեսնում էր անտոհմիկ գաւառացու մէջ. չէր էլ գարշում անառակութիւնից ու շուայտութիւնից, որովհետեւ դա՛ իւր աշրում մեծ համարուող իշխանի ունակութիւնն էր: Այսպիսով ուրեմն, այդ զարգացած մարդու մէջ միաժամանակ գործում էին՝ թէ՛ նախկին վայրենիի ստրկական բնազդը և թէ՛ գուհիի նախանձը, որ թոյլ չէր տալիս նրան՝ ծագումով իրեն հաւասար գաւառացուն տեսնել իշխանական կալուածքի տէր: Այս տեսակէտով էլ ես բացազրում եմ թո՛ւ արտայայտած ցանկութեան միտքը:

Պետրոսը լուռ էր և չէր պատասխանում: Նա կարծես, որոճում էր իմ ասածները՝ նրանց մէջ հերքելի կէտեր գտնելու համար: Բայց երբ ես հարցրի՝ համաձայն ես ինձ հետ թէ՛ ոչ, նա պատասխանեց.

— Թո՛ւ ենթադրութիւնները վիճելի կէտեր շատ ունին. բայց որպէս զի մեր խօսքը չերկարի, ես ոչ մի առարկութիւն չեմ անում. այդ մասին կխօսենք ուրիշ ժամանակ: Այժմ դեռ գնանք սօսիների տիրոջն այցելելու:

Այս ասելով՝ նա վերկացաւ տեղից: Ես ևս հետևեցի նրան:

Գ.

Վեդունց բակը մտնելով՝ մենք ոչ ոքի չպատահե-

ցիւր: Այդտեղ լուծիւն էր տիրում: Եթէ գոմի գրան մօտ կապած ուր չլինէր, որը թէ առջև թափած խոտը ուտում և թէ մեղ էր նայում, այլ և պառաւ, ուժազուրկ չունը, որ սրահի շքարանից կնիւով մի երկու բերան ծուլարար հաջեց և ապա նորէն բակի մէջ ընկած հին սայլի տակը մտաւ, մինք կկարծէինք թէ՛ այս տան մէջ կենդանի չունչ չկայ: Բոլոր նշաններից երևում էր որ մի օր այդ յարկը շէն ու փարթամ է կղզի, որովհետև բացի շքեղ սօսիներից, որոնք նրա բակի մի մասն էին բռնում, տունն էլ, ըստ ինքեան գրաւում էր ընդարձակ տեղ և շինուած էր հարուստ գիւղացու ճաշակով: Նա բազկացած էր մի մեծ, բարձրաշէն օղայից և երկու ուրիշ, նոյնպէս բարձրագիր սենեակներից: Նրանց մէջ տեղում գտնուած էր ընդարձակ, սիւնաղարգ սրահ: Վերջինի սիւները տաշուած էին կաղնու հաստ դերաններից և ունէին, մինչև անգամ, խոյակներ. որոնք թէպէտ ծխից ու հնու խոնից սեւցած, այսուամենայնիւ, իրենց վրայ կրում էին հիւսնի ձևերի ճարտարութեան նշանները, այն է՝ զանազան քանդակներ, որոնք ներկայացնում էին կենդանիներ, բոյսեր և այլևայլ նկարներ: Բակի, գոմի և հարթանոցի ընդարձակութիւնը ցոյց էին տալիս որ այդ տունն ունի, կամ ունեցել է մի օր բազմաթիւ անասուններ: Իսկ թոնդրատան տնից հեռու գտնուիրը, արդէն ապացոյց էր որ Վեդունը շէն օջախ լինելով՝ միշտ ունեցել են հիւրեր, որոնց ծխից ազատ պահելու համար՝ թոնիրը ոչ թէ ուրիշների պէս տան սրահում, այլ բակի մի անկիւնումն են զետեղել: Չնայելով այս բոլորին, այսուամենայնիւ, երևում էր որ ոչ միայն նախկին կեանքը չէր եռում այդ տան մէջ, այլ և մի աւերիչ ձևը ծանրացել էր նրա վրայ: Որովհետև տան կտուրը մի կտրից արդէն ծռուել էր, իսկ բաշերի հոլը մի քանի տեղ թափուել: Երկու սենեակների պատուհանները մեծ մասամբ ապակիներից զուրկ՝ ծածկուած էին ձէթած թղթով. գոմի գուռը կրկնահան եղած՝ ընկած էր պատի տակ, իսկ հորթանոցը, մինչև անգամ զուրկ էր դրանից:

— Այստեղ մարդ չէ երևում, վերագառնանք, ասացի ես ընկերոջս:

— 2է, թող միանգամ էլ հնչակը բաշենք, գուցէ մէկը երևայ, պատասխանեց նա.

— Հնչակը ո՞րն է, հարցրի ես զարմանալով.

— Գիւլպետու հնչակը չգիտեմ, սա է, այ, տես ինչպէս լաւ է հնչում. Այս ասելով նա գետնից մի բար վերցրեց և նետեց սայլի տակ պառկած շան վրայ. Վերջինս վերկացաւ տեղից և այս անգամ սկսաւ հաջել աւելի աշխուժով. Մի քանի րոպէից, արդարեւ, օդայի դուռը բացուեցաւ և այդ տեղից դուրս եկաւ աղբատ հագնուած մի պառաւ, որն յուշիկ յառաջանալով՝ մօտեցաւ ու կանգնեց սրահի սիւների մէջտեղը. Սա մօտ վախժսուն տարեկան մի կին էր, միջահասակ ու վտիտ մարմնով. խորշումած երեսով, կկոցուած աչքերով՝ բայց բարի ու միամիտ արտայայտութեամբ.

Տեսնելով մեզ բակում, նա ձախ ձեռքով հովանի արաւ աչքերին, կարծես, աշխատելով՝ ճանաչել մեզ և ապա հարցրեց.

— Ում էք ուզում.

— Վեզունց Սարգսի տունը սա է, հարցրի ես, իբր չճանաչելով.

— Հա, էս ա, պատասխանեց պառաւը.

— Սարգիս-ապերը տանն է,

— Հրէն բախշումը ծառի տակը բնում (փորում) ա:

— Բախշան ո՞րտեղից գնանք, հարցրի ես.

— Այ, կիւմի կողքովնը վեր անց կացէք, դուռն ընտի ա, յայտնեց պառաւը.

Հագիւ թէ մենք շուռ եկանք, նա աւելացրեց. — ամօթ չրի հարցնիրը դուք հո՞վ էք.

— Օտար մարդիկ ենք. եկել ենք ձեր գեղը տեսնելու, ասացի ես.

— Բա ո՞ր դիւան էք գալի, հետաքրքրուեց նա.

— Չատ հեռու տեղից, պատասխանեցի ես.

— Էլ հա, հօ աշխարհի էն ճնգիցը (ծայրիցը) չէք գալի. մին ասեցէք տեսնամ ո՞ր շհարից էք.

— Ես Թիֆլիզից եմ գալի, իսկ իմ այս ընկերը՝ Մոսկովից.

— Դու Թիֆլիզից ես գալի. վա՛յ րէ մատաղ ըլեմ

ես. բա խֆի շուտ չես ասում... Այս խօսքերով պառաւր մօտեցաւ և ձեռքը տալով ինձ՝ ողջունեց այնպէս սիրով որ, ասես թէ, իւր քեռորդուն, կամ որ և է հարազատին էր պատահել և ապա հարցրեց.— Մի առն, քե մատաղ մեր Վանուն (Յովհաննէսին) էլ տեսար:

— Զեր Վանուն... կնեքես, նանի. չեմ ճանաչում, ասացի:

— Ընաչում չիս... բա մեր Վանուն արարած աշխարհը ճնաչում ա, էդ մնց ա որ դու ճնաչում չես:

— Որտեղ է լինում:

— Սուղումն ա ըլում, քե մատաղ, ատվակատ ա, դողերին ու մարդասպաններին նա ա Միրիբից ազատում: Դու խֆի չես ճնաչում:

Պառաւր վերջին տեղեկութիւնը օգնեց յիշողութեանս:

— Այո, այո, այժմ ճանաչում եմ, այնտեղ նրան Վեդով են ասում:

— Հա, քե մատաղ, ըտենց են ասում. հմի հօ ճնաչեցիր:

— Այո. նանի, ճանաչեցի:

— Տեսիլ ես, քե մատաղ. մնց ա, սաղ սալամաթ ա:

— Տեսել եմ, նանի, շատ առողջ է. միամիտ եղիր, ապահովացրի պառաւրին:

— Մատաղ ըլեմ քո աչքերին. էս ա հինգ տարի ա, երեսը չեմ տեսել... քոռանայ ինձ նման մերը, ասաց պառաւր ու լացակումեց:

— Ինչո՞ւ չես տեսել. այստեղ չի գալիս, հաբցրեց Պետրոսը:

— Զէ, քե մատաղ, չի գալի: Ասում ա դամ գեղումը ի՞նչ չինեմ: Ասում եմ, որդի, եկ, կողքիս նստիր սկի բան մի չինիլ. եկ, որ ամեն օր էրեսդ տեսնեմ, բօյիդ, բուսաթիղ եաչեմ... Ախար աչքումս մազ ա կնանչել որ քե էդ օրին եմ հասցրել... Ասում ա, նանի, ասիլ մի, էդ ըլելու բան չի...

Վերջին խօսքերի հետ՝ արտասուքի կաթիլները գլորուեցան պառաւր խորշումած դէմքի վրայ: Նա գլխափաթաթի ծայրով աչքերը սրբեց:

— Ինչո՞ւ ես լաց լինում, նանի. որդիդ, փառք Աս-

տուժոյ, ողջ առողջ է, գործն էլ յաջողակ, բո ուզածն էլ այդ պիտի լինի, սիրտ տուի ես պառաւին:

— Հա, քի մատաղ. բա ինչ ա. որտեղ բլում ա ըլի. թարի (միայն թէ) սաղ ըլի... ինչ անեմ թէ ես ըստի իրա կարօտը բաշում եմ. . պատասխանեց պառաւը, աշխատելով իւր վիշտը ծածկել. Բայց մի փոքր յետոյ աւելացրեց. — Չատ վախտ ա գիր չկեր ստացել. Աստուած պահի քեզ որ իմ Վանուցը խեր խարար քերիւ...: Ապա տեսնելով որ ընկերս շարժում է դէպի առաջ, ասաց. — Կուգէք, բստի էյվանումը նստեցէք, ես գնամ մեր հալւորին կանչեմ:

— Չէ, նանի, մինեղանար. մկնք ինքներս կերթանք, ձեր բախչէն էլ կտեսնենք, ասացի ես և ողջունելով պառաւին՝ առաջ անցայ Պետրոսի հետ:

— Այս ինչ հանելուկ է, հարցրեց վերջինս, երբ մկնք հեռադանք. — Այս մարդը Տէր Մակուչին խորհուրդ է տալիս՝ անուտում թողնել իւր չորս ողբիներին. մինչդեռ ինքն իւր որդուն բարձր կրթութիւն է տուել և փաստարան շինել:

— Այդ հանելուկը լուծելու համար՝ մկնք պիտի մի փոքր էլ համբերենք և ծերունուն լսենք, պատասխանեցի ես:

Պետրոսը ոչինչ չխօսեց և մկնք միասին պարտէզը մտանք:

Իս մի ընդարձակ տարածութիւն էր, որի մեծ մասը ծածկում էին մի բանի շարք ստղատու ծառեր, այն է՝ խնձորենիներ, տանձենիներ, սալորենիներ և սերկիլիներ, ամենքն էլ, պրիթէ, պտուղներով ծանրաբեռնուած:

Պարտիզի վերջում մի մարդ, գլուխը կապոյտ թաշկինակով կապած՝ փորում էր կիսաչոր մի դեղձնու շուրջը:

— Անշուշտ սա է Վեդունց Սարգիսը, առացի ես Պետրոսին և նրա հետ միասին առաջացայ դէպի նրան:

Սա յողթանդամ, բարձրահասակ, բայց մի փոքր կորարամակ ծերունի էր, մօտաւորապէս եօթանասուն տարեկան: Թաշկինակով կապած գլխի շուրջը մազ չէր երևում, բայց ընչացքն ու կարճ մօրուքը բոլորովին ճերմակ էին: Նրա դէմքի արտայայտութիւնը խիստ էր բայց

ոչ չար, իսկ աչքերը, թէպէտ ծածկուած թաւամաղ յօն-
քերով, սակայն ցոլացնում էին խելք և բարութիւն: Նա
հագած էր կոշտ կտաւէ շապիթ կապոյտ նաշուրի
օձիթով, իսկ դրա վրայից սև դադաքի մի հնամաշ
արկալուէս: Վարտիքը, որ կարած էր գիւղում գործուած
բրթէ շալից, ունէր նոյնպէս մի քանի կարկատան և սը-
րունքներ յի մօտ սեղմուած էր սև տօլաղններով: Ոտքերին
ամրացրած էր հասարակ կաշուի տրիխներ. իսկ մէջքը
սեղմած սև կտաւի մի դօտիով:

Նշմարելով մեզ մի քանի քայլ հեռաւորութեան
վրայ, նա իսկոյն գործելուց դադարեց և բահը զեղծնու-
նին յինելով առաջացաւ դէպի մեզ:

— Բարի աջողում, Սարգիս ապեր, ասացի ես առա-
ջին անգամ, և մօտենալով ձեռքս պարզեցի դէպի ծերունին:

— Այ՛ Աստծոյ բարին. բարով էք եկել, պատասխա-
նեց նա ժպտալով և իւր կոշտ աջով մեր ձեռքը թու-
թուելուց յետ, շարունակեց. — Հաւատաս դուք էք Մհա-
րանց Մուրու դօնաղները:

Ամբողջ գիւղն արդէն դիտէր որ մի օր առաջ հիւ-
րեր են եկել Մհարանց Մուրու տունը, և մեզ, ահա, այդ
անունով էր ընդունում ծերունին:

— Այո, Սարգիս ապեր, մենք ենք:

— Բարով էք եկել, հողար բարով. կլի որ լաւ բանի
հմար ըլէք եկած, Աստօծ յաջողի:

— Մի առանձին բան չունինք, հենց ման գալու հա-
մար ենք եկել:

— Ինչ որ ա, բարի ըլի: Աշխարի շառն էնքան շտա-
ցել ա, որ մարդ ջուր խմելու հմար էլ թէ տեղիցը վեր
կենայ, պտի Աստօծ կանչի որ բարի ըլի: Չեզանից սրն
ա Մինարանց Ակօբի տղէն:

— Ես եմ, պատասխանեց Պետրոսը:

— Հա, բու հէրը լաւ մարթ ա, լաւ էլ հայ ա. դադ-
րը (երախտիքը) գիտնում ես, պատիւ ես տալի:

— Ինչպէս կարող եմ պատիւ շտալ. քանի որ նա իմ
հայրն է:

— Հինչ գիտամ. էս այամուճը ըսկի որդին հօրը ճը-
նանչում չի: Էդ շլապէն սում գլխի տեսնում եմ, հենց գի-

տու՛մ եմ հօր տանիցը ջուտա ընկած (տարագիր եղած) ա.

— 2է, ես ծնողներիս շատ եմ սիրում և հենց նրանց տեսնելու համար է որ Մոսկովից վեր եմ կացել եկել:

— Հա՛. որ ըտենց ա, շատ ասրես, Աստօժ պահի բեղ. բարի ժառանգ ըլես. օրհնեց ծերունին և ապա դառ. նալով ինձ հարցրեց. — Գրախշես, բեղ ճնաչում չեմ. դու հումանցից (օրհնցից) ես:

— Ես էլ մեծ տէր Օվանէսի թոռն եմ. պատասխանեցի ես:

— Աստուրի տղէ՛ն:

— Այո՛.

— Դէ շուտ ասա՛, հեր օրհնած. ախար բու ողորմած հերը իմ տան լաւ բարեկամն ա էլել. առանց իրար թիրա շենք կտրել: Քանի՛ բանի անգամ էս բախշումը նստել, բեֆ ենք արել — բանի՛ անգամ մեր շնարուցը տակին դուռնա դաւալով մարտա ենք սարքել. . Օղորմի բո հո. դուն, Աստուր, ասում էր, ա՛ Սարգիս, էս շնարիբը որ բունն ա, լաւ կլի որ տանդ գլխին մին ատած (յարկ) էլ շինես, հու առաջը լէն ու բոլ մի թախտասպանդ (պատշգամ), ընենց ըլի որ շնարուցը ճղները կռանան թախտարանդի վրէն շուք անեն: Էն շախը (այն ժամանակ), ասում էր, տունդ ամարաթի (պալատի) նման մի բան կը դառնայ. հենց որ թախտարանդին նստես էս սարերին մտիկ տաս. ես չէ, սարինն (դուլը) ընկած վախտը ընտի մի ստարան շայ լամես, հենց կը մանաս թէ դրախտումն ես նստած:

— Եւ իրաւ, շատ լաւ է ասել. մեղ էլ հէնց այսօր ձեր շինարիբն են բերել այստեղ: Ափսոս չէ՛ որ այդ պեղեցիկ ծառերի առաջ դուք երկու յարկանի մի տուն շունենա՛ք, յարեցի ես:

Ծերունին նայեց ինձ վրայ քննական հայեացքով, կարծես, ստուգելու համար թէ՛ արդեօք իւր սիրտը ցաւեցնելու համար շասացի այս խօսքերը: Բայց ես, ի հարկէ, ասել էի միամտաբար, առանց իմ խօսքերին մի առանձին նշանակութիւն տալու: Սակայն յետոյ իմացայ որ դրանք ձերունու սիրտը խոցած պիտի լինէին անշուշտ:

— Լաւ ես ասում, որդի, շատ լաւ կլէր որ շինի,

ամա ի՛նչ անես ուր...

— Հա՛, ինչո՞ւ չչինեցիր:

Ծերունին փոխանակ պատասխանելու նայեց իւր շուրջը, ապա դառնալով մեղձ ասաց.

— Էս խի ենք ըստի կաղնել. գնանք էյվանուժը թախտի վրէ՛ն նստենք, եդոյ կխօսանք: Կրախշէք, մարդ որ ծերանում ա, մարիֆաթով ժաժ գալն էլ ա մոռա՛նում... գնանք, ըսնեց կաղնած կնեղանաք:

— Զէ, Սարգիս ապեր, այստեղ աւելի լաւ է, այ, այս սիրուն ծառի տակը կնստենք, ասացիք ես:

— Լաւ, որ ըտենց ա, թող մի խալիչա բերեն... Ախշի հէյ, ա՛ Սաւդիւլ, մի խալիչա զրկի ըստեղ, ձայն տուաւ ծերունին դէպի տան կողմը:

Մի բանի բողբոջ յետոյ, մի փոքրիկ, աղքատ հագնուած աղջիկ, մի հին գորգ բաշ տալով բերաւ փռեց ծերունու ցոյց տուած տեղը: Չերջինի հրաւէրով մենք նստանք գորգի վրայ:

— Հա, ասում ես թէ՛ խի չչինեցիր, շարունակեց ծերունին ընդհատուած խօսակցութիւնը. լաւ ես ասում, որդի՛ որ շինած ըլէի, հմի էս ա դուք որ եկել էք, կըտանի ու կնստացնի էն հովհար թախտաբանդումը. ու մի թիքա հաց կդնի առաջներիդ... ամա դէ կարացի ոչ...

— Երևի փող շունէիք, հարցրեց Պետրոսը:

— Փնդ, .. ընչի՛ շունի, փող էնքան ունէի, որ մի ատած չէ, էրկուս էլ կշինէի:

— Հապա, ինչո՞ւ չչինեցիր, յարեցի ես:

— Նոյի ազուաւը չթողեց, որդի, նոյի ազուաւը:

— Նոյի ազուաւը:

— Հա՛:

— Ո՞րն է նոյի ազուաւը, հարցրի ես դարմանալով:

— Նոյի ազուաւը գիտում չես ո՞րն ա:

— Ոչ:

— Բաս դու սկի յուսումարանումը կարդացել չես:

— Կարդացել եմ:

— Դէ, էնա վարժապետը ասած կլի թէ՛ հնով ա նոյի ազուաւը, էլ խի ես ասում թէ՛ գիտում չեմ:

— Զրհեղեղի՛ ժամանակի նոյի ազուաւն ես ասում:

— Հն, բա էլ ուրիշ ի՞նչ նոյի ազուաւ կայ:

— Այն ազուան է, որ չի թողել բեղ տունդ շինելու:

— Հն, հէնց համին (իսկ և իսկ) էն ազուաւը:

Ես դժուարութեամբ էի ծիծաղս դսպում, իսկ Պետրոսն արդէն քահ քահ ծիծաղում էր:

— Խի ես ծիծաղում, որդի, հարցրեց ծերունին ընկերիս:

— Հապա, ի՞նչ անեմ որ չծիծաղեմ. ասում ես նոյի ազուաւը չի թողել որ տունդ շինեո: Առաջինը՝ ազուաւը մնց կարող է արգելել բեղ քո տունը շինելու, երկրորդ՝ նոյի ազուաւը մինչև այսօր ապրում է որ բեղ արգելի:

— Բաս չի ապրում:

— Ի հարկէ ոչ:

Ծերունին ժպտաց: Սակայն նրա այդ ժպտի մէջ այնքան ծաղր կար ուղղուած դէպի ընկերս, որ ես չկարողացայ իմ հետաքրքրութիւնը դսպել:

— Բացատրէր, աղաչում եմ, ի՞նչ ազուաւ է այդ, կամ ումն ես դու ազուաւ անուանում, խնդրեցի ես:

— Առաջ դու ինձ ասած, էդ ազուաւի պատմութիւնը դիտում ես թէ ոչ:

— Ինչպէս չէ:

— Դէ պատմիր:

— Ի՞նչը պատմեմ. ջրհեղեղի պատմութիւնը:

— Չէ, էդ ես բեղանից լաւ եմ ըմանում: Չասես թէ՛ Սարգիս ապերը գեղացի ա, դատ չի դիտալ: Չանբումը իրեք տարի կրդացել եմ. իրեք տարի էլ կէս-դէրութիւն (տիրացութիւն) եմ արել: Աստուածաշունչը էրկու անգամ անց եմ կացել (կարդացել եմ):

— Ուրեմն միայն ազուաւի պատմութիւնն ես ուզում:

— Հն:

— Էհ, նա մեծ պատմութիւն չունի: Երբ նոյի տապանը Արարատ սարի վրայ կանգնեց, այդ ժամանակից բառասուն օր անցած՝ նոյը տապանի պատուհանը բացուեց և դուրս թողեց ազուաւին, որպէս զի իմանայ թէ ջրերը ցամաքել են թէ ոչ: Բայց ազուաւը վնաց ու չը վերադարձաւ:

— Խաբար չբերեց նոյին:

— Այն:

— Բա խի՞ յետ չդարձաւ:

— Յայտնի չէ. դրա համար Աստուածաշնչումը բան չկայ գրած:

— Գիտում եմ բան չկայ գրած. ամա դու ի՞նչ ես փիքր անում, խի՞ յետ չը եկաւ:

— Ազուաւը ծանրամարմին թռչունն է, երևի շատ թռչելուց յոգնելով՝ ընկաւ ջրի մէջ ու խեղդուեցաւ, յարեց Պետրոսը:

— Հը՞... ժպտաց ծերունին. էդա ձեր յուսումարանումը բղննց խամ են թողում ձեզ է՞. ազուաւը խեղդունդ ջանաւար (գազան) ա:

— Ապա, ձեր կարծիքով ինչո՞ւ չվերադարձաւ, հարցրի ես:

— Նրա համար, որ քերձերի գլխին, եա չէ, սարերի դոշին մարդի, եա հէյվանի ջամդաք (գէշ) տեսաւ, վրան ընկաւ ու սկսեց լափիլը: Խի՞, ազուաւը մտածիլու էր թէ՞ ընտեղ տապանումը Նոյը աչքը ջուր կտրած ինձ ա ըսպասում:

— Գարելի է այդպէս է:

— Ոչ թէ կարելի ա, հէնց գրուստն էս ա որ ասում եմ:

— Թող այդպէս լինի. միայն ասա տեսնենք այդ ապուան ի՞նչպէս արգելեց բեզ քո տունը շինելու, հարցրի ես:

— Հինչպէս արգելեց. մը խրէ մաջալ տու, ասեմ...

Այս խօսքերով ծերունին գլխի թաշկինակը հանեց և կոշտ ձեռքով ճաղատ դուխը շոյելով ու զովացնելով՝ շարունակեց:

— Գիտում էք հինչ կայ. Աշխարհումս առանց Աստծու բան չի ըլում. ըսկի տերնն էլ ծառիցը տափը չի ընկնում: Հալբաթ ըս էլ Աստծու կամքն էր որ ըսենց էլաւ:

Ծերունին դարձեալ լռեց. ապա նորէն գլխի թաշկինակը կապելով՝ շարունակեց:

— Հինչ որ պտի պատմեմ, հինուց բան ա. կլի որ բսանհինգ տարի ըլի. եա չէ էրսուն. էն շախը ես հլա բաբաթ (բաւական) ջահել էի: Մի օր Օսէփ վարդապետը եկաւ մեր տուն: Օսէփ վարդապետի անումը լսած կանր հարցրեց ծերունին:

—Ոչ, պատասխանեցի ես:

—Հա, լսած չէք ըլի, դուք ջահել էք: Նրա մեռնիրը, հաւատաստասը եւ տասներկու տարի ըլի: Աստուծ հոգին լուսաւորի. արդար մարթ էր, ասիլ հոգեւորական: Վանքի վանահայրն էր. շուտ շուտ կգար մեր տուն. կը նստինք էս ծառերի շուարումը, դրից կանինք: Ողորմած հոգի բու հերն էլ շաա կսիրէր նրան: Էնա մի օր եկաւ տեսաւ որ գերաններ եմ բերել տուել որ տախտակ քաշել տամ. գեղականի հետ էլ խօսում եմ որ քար ու կիր բերի:—Ա Սարգիս, ասեց, էդ ընչէ հմար ես թագարիք (պատրաստութիւն) տեսնում:—Հայր սուրբ, ասեցի, ծառայ եմ քե, ուզում եմ տանս գլուխը շինել տամ: Մեր աղա Ասատուրն էլ ա խորհուրդ տալի: Ես էլ տեսնում եմ որ լաւ կըլի: Ափսոս ա որ էս լաշին (գեղողէշ) շարուցը առաջին էրկու ատաժանի մի տուն չըլի, որ եկող գնացողը նրա հովհար թախտաբանդումը նստի մի սհաթ էլ ա քէֆ րաշի: Էս խօսքի միջումը մեր Վանին հորթի եզից վագելով՝ եկաւ որ մեր մօտիցը անց կենայ թէ ինչ ա, հորթի առաջը կտրի, բռնի ու վրէն նստի: Էն չախը նա հլա տասը տարեկան էր: Էն ա հայր սուրբը էրէխի ձեռը բռնեց ու ասեց.—ա Սարգիս, գիտաս հինչ կայ. տանդ գլուխը մի շինիլ. այ. սրա գլուխը շինիր: Էն փողը որ խարջելու ես թէ ինչա տանդ վրան մին ատաժ աւելացնես. լաւն էն ա որ խարջես ու էս էրեխի գլխումը ուսում ու գիտութիւն մտցնես:—Ասեցի, հայր սուրբ, րէլին հօ անուսում չեմ թողիլ. մը քիչ վախտից եզը վանքը պտեմ դրկեմ որ լաւ կարդալ սովորացնես: Վայ ինձ, հէնց գիտումի թէ՛ Հայր սուրբը նրա հմար ա ասում որ րէխին իրա մօտ դրկեմ, հինչ ա մեղանէ խերուի (օգտուի): Ամա օղորմած հոգին պատասխանեց.—Ա Սար, ասեց, ես հինչ ուսում, եա գիտութիւն ունեմ, որ գրան հինչ տամ: Հրէն դարկի Թիֆլիս, գիմեագումը կարթի, լաւ յուսում ստանայ: Էնդիան եզն էլ դրկի Մոսկով, եա չէ Գետրպօլկ, որ ունիվերս մտնի, ընտեղի մեծ յուսումն էլ առնի, փիլիսոփ դառնայ: Էն չախը կգայ, էս գեղի միջումը մին հատ մարթ կլի: Համ իրա ձեռովը տանդ գլուխը կշինի. համ էլ մէջումը յուսումնարան կը

բանայ, խեղճ են էս գեղըցիքը, խաւար մնացել են, խաւար էլ պտի մեռնեն. էն անրանց էրեխէքը կը հաւաքի, ուսում կտայ, ու մի քանի տարան եզը սաղ գեղը կուսաւորի: Էս բանը համ Աստուծոյ դուր կգայ համ բանդին (մարդկանց).— Զայր սուրբն էս որ ասեց, խելքումս նստեց: Ասեցի, Զայր սուրբ, լաւ ես ասում. թող տանս գլուխը հին մնայ. ինձ հնով ա տնազ անիլու (ծաղրելու). Թար ըլի իմ Վանուն գլուխը զարթարուի: Ասենք, հինչ մեղքս ծածկեմ, ես էլ հէնց էն գլխից յուսումի ու դիտութենի գերի էի: Երբ մի յուսումնական մարթ կ'ըստ մեր գեղը, ում տան էլ որ վէր դար, կգնայի զօռով զսնազ կրերի մեղ մօտ, թէ հինչ ա աշխարհի էն լաւ լաւ բաներիցը մի երկու բերան խօսա: Մեր հայրը սուրբը մի լաւ Զամչեան ունէր. էնա շուտ շուտ վանքը կգնայի, թէ հինչ ա կշտիս նստի, մին մին գլուխ կարդայ որ լսեմ էն Զայկի, Արամի, եա չէ Վարդան զօրաւորի լաւ լաւ պատմութիւնը որ կկարդար, հոգիս կմխիթարուէր: Զատ վախտ էլ սիրտս էն հաւգի կլցնուէր, որ շաց կլէի հու էնա արտասուքս ջրի նման կթափուէր: Հինչ երկարացնեմ, տեսայ որ հայր սուրբի խորհուրդը լաւն ա, վրձնեցի որ տանս շինութիւնը թողամ ո՛ր բեխէն Թիֆլիս գրկելու թաղարիբը տեսնամ: Եփ որ էս բանը մեր տնացուն (կնոջը) ասեցի. քիչ մնաց որ խեղճը խելքիցն ընկնի: Հինչ լաց, հինչ շիւան, հինչ գլուխ թակիլ: Ամարթ, ասում ա, էդ խի՛րտենց անԱստօծ բան ես բռնում. բամենք ճար ու ճրագ մի տղայ ունենք, էն մնց վեր ունինք գրկենք դարիբ տեղ ու մենք, երկու հոգի, մնանք ըստի բայլուչ:— Ա կնիկ, ասում եմ. տղին հօ ծախում չենք. գրկում ենք որ յուսում տունի, մարթ դառնայ ու էլ նոր եդ գայ, մեր օջախը յուսաւորի: Դորթ ա էս ասում եմ, ամա մեր օղլուչազին էլ դնամիչ անիլ (մեղադրել) չէր ըլիլ: Սխար Աստօծ մեզ չորս երեխայ էր տուել ու էլ եդ իրերին տարել մին էդ էր մնացել որ դիփունանցից պուճուրն (փոքրն) էր: Ի՞նչ մեր ըլէր, որ լսէր թէ իր միևնուճար ըէխին ուզում են. ձեռիցը խել, ջանը կրակը չպցէր ու թողէր որ տանեն: Կնիկ արմատը, գիտաք, զորթ ա, խելքը կարճ ա, ամա սիրտը բարակ ա. ըսենց ցաւին

դժար կրիմանայ, նրա համար լաւ ա որ իրա տղան սաղ սալամաթ իր աչքի առաջը կազնած ըլի, թէկուց հէնց չօրան եա հորթարած ըլի, քանց գնայ, երկրէ երկիր, յուսում առնի, եա փրկիսոփ դառնայ, Ամա գէ ես տնացուց լաց ու շիւանին եաշեցի ոչ. իմ թատարիքը տեսայ հու Վանին իմ ձեւրովը տարայ Թիփլիզ, թափշուր արի (յանձնեցի) մեր կնքաւոր տղին. նա էլ ընտեղ լաւ վաճառական էր. ծանօթ բարեկամ ունէր. բեխին պատրաստել տուաւ, հու մի սարանը եզը գլմեազը տուաւ, որ բեխան գշեր—ցերեկ ընտեղ մնայ համ էլ կարթի.

«էդ օրից դէսը Վանին դառաւ իմ դարդն ու դէյի. դը (ցաւն ու հոգսը). Ղորթ ա, բէխին սաղ սալամաթ թողեցի եկայ, ամա օր ու քշեր հենց նրա վրէն ի մտածում: Եարանք, ասում ի. բէխաս հօ չմբսեց, եա չհիւանդացաւ: Եարանք եազի (օտարի) տանը բէխի սիրտը հօ շկտորեց: Ես սր մինն ասեմ. ինսան կնք էլի. մտածուները Աստօծ մեզ ա տուել: Ամա ինչ որ նրա մէրն էր անում. բերանով ասուիլ շի ըլի. Խեղճը ոչ քշերը քուն ունէր ոչ ցերեկը դարար (հանգստութիւն): Տափը, ասես, տեղ չէր տալի որ նստի. էն ա ամեն մի ներս ու դուս անկով ընկնց էր ախ բաշում, որ ասես շիգարը սոկ ա գալու: Բէխի սիրած շունը որ տեսնում էր թէ հոտոտելով դէս ու դէն ա դնում, ասում էր. ա Ղաթար, Վանուն ես ման գալի. ըստի շի, քե մատաղ, էնա օխտը սարի քամակին. ասում էր ու լաց ըլում: Նախիրը որ հանդումը եզանում էր, հորթերը բռանցում ին, ասում էր—ջան, եարանք իմ բեխէն էլ ձեզ նման անմեր մնացած բռանչում ա, հու ձէնը լսոց չկայ... Եփ որ մտնում էր էո բախչէն հու տեսնում ծառերը տանձ ու խնձորով լիքը, ասում էր—ձեր աչքը բռունայ, էդ սըր էր ըզեց կանաչ կարմիր լցուել, ճռնրոտել (ծանրաբեռնուել), ախար որ Վանին ըստի շի. խի չէր չորանում, վեր թափում. Խուլասայ (վերջապէս), ես սր մինն ասեմ. Չատ վախտ էլ ականջներս ծածկում ի հու փախչում, հինչա, խեղճի լացն ու արտասուրը շտեանեմ. Գիտում էր, ծնող ըլիլը հեշտ բան շի բեխի տէր պտի ըլէր որ էս ցաւը քաշէր հու իմանաք թէ ինչ դժար բան ա. Ամա դէ էլի ես դիմա-

նում ի. էրեսանց էրեցնում չի. հրա Սաւգիւլին էլ սիրտ ի տալի. ասում ի անղջի, ըտենց վրովթաչ (մրմնջալ) մի. էս ա ըբխան յուսումը կարծնի կգայ. էնչախը ուրախութիւնդ տասնապատիկ կրլի. Ղորթ ա, հմի նեղութիւն ես քաշում, ամա դէ էն վախտը որ տեսնես թէ քու տղէն գեղի միջումը մին հատ ա, հու դիփունանք նրա դուլումն են կանգնած, տեսնես որ նա իրա յուսումով գեղի ըբխանցը լուսաւորում ա, ու սրանց էլ հերերն ու մերերը նրա արևովն են երթում ուտում, սիրտդ կփառաւորուի. քաշած ցաւերդ կմոռանաս... խեղճ կնիկը, դորթ ա, էս խօսքերով մին օր հանդստանում էր. ամա էլ էգսը իրա ցաւն իրա հետ էր:

«Վրա էրկու ամառն էր դնում որ մենք մեր օրերը ըսենց դժարութենով անց ինք կացնում. Մի օր վանքումը Օսէփ հայր սուրբին տեսայ. Հն, մոռացել ի որ ասեմ ձեզ, թէ օրից որ Վանին տարել է Թիֆլիզ, Հայր-սուրբն իրա ոտը մեր տանից կտրացրել էր. Չուն լսել էր որ Սաւգիւլն ասել ա թէ՛ «իմ ըէխին էդ սևագլուխը դարիբութիւն պեցեց. էլ իմ աչքը դրան տեսնա ոչ». Խեղճըն էն ա սրա հմար էլ մեր տուն չէր դալի. էդ օրը որ վանքումը պտահեցի, ասեցի «Հայր սուրբ, մատաղ ըլեմ կարգիդ, ախր մեր տանեցին ինձ դինջութին չի տալի, կարում չի դիմանայ. Չի՛ բլի որ Վանուն էլ եդ բիրել տնւք»: Ասեց՝ ա Սաք, խելքդ կորցրել ես. բա ըէխէն անջախ (հագիւ) ա յուսումի վրէն տարացել, բերում ես որ հի՛նչ անես, չօքան պտի շենես. Ասեցի բա անց ա. նենք որ մօրը սիրտը դիմանում չի. Ասեց հէր օրհնած դէ էնա տարին իրեք ամիս պազնիկ ա. խի՛ չէք էն վախտը բերել տալի. Նսել է, հի՛նչ մեղքս ծածկեմ, պազնիկի բանը սկի լսել չի. Ասեցի, Հայր սուրբ, պազնիկը հի՛նչ բան ա. Ասեց ըսենց, ըսենց, ըսենց. Վայ Աստծու խեր խաբարը քե, ասեցի, Հայր սուրբ, բա էդ խի՛ մինչև հմի շես ասել. Դէ շուտ, շուտ, մի գիր գրի մեր կնքաւորենց տղին, որ էրէխին դրկի. էս որ ասում եմ, Մայխի միջումն էր. էն ա հայր սուրբը. Աստօժ հոգին լուսաւորի, գիրը գրեց ու մի տասնուհինգ օրից եզը է՝ ըբխան եկաւ:

«Դէ հմի դուր ըստեղ պտի ըլէիր որ տեսնիր թէ՛ մերը ոնց էր գնում տղի առաջը: Ըսկի մուռանալ չեմ: Իրիգուայ շախն էր. նախիրը նոր էր հանդիցը եկել: Սաւագիւր կովկիթը ձեռին՝ Սոնա անուամով մի սիրուն կով ունէինք, նրա առաջը չորած՝ կ'թում էր: Հէնց որ չըսեց թէ բխէն գալիս ա, կովկիթը ձեռէն վեր գցեց, ու գիծի նման վաղ տուաւ:

— Սաւագիւր, Սաւագիւր, աղջի էդ ուր ես վաղ տալի, բխէն հլա հեռու ա, կանչեցի եղիցը. ամա լսեց ոչ: Աղջի կացիր ես էլ գամ, մենակ գնալ մի, բղաւումի եղիցը. ամա Սաւագիւրի ականջումը որ թոփ էլ տրարէր լսելու չէր: Ճարս կտրեց, ես էլ վեր կացայ ու եղիցը վազեցի: Գեղըցիք բանից բխարատ, կտրներիցը ես էլ վաննեցիքը մտիկ ին տալիս մեզ ու արմանում: Հէնց դիտում ին թէ՛ կնիկս պելացել (գժուել), տանիցը փախչում ա, հու ես էլ եղիցը վաղում եմ որ բռնեմ: Էդ սհաթումն հով էր կաղնելու թէ, ինչ ա, նրանց բան ասի: Ինչ կլի մին վերստաչափ ըսենց իրար եղից վաղ տուինք: Հէնց էնա, էլի (հասարակաց) ճամպին հաս ու հաս ինք որ թումբի եղիցը բխանն բաց: Սաւագիւր որ մինչ կլի էն դուշի նման թռչում էր հու ևս եղիցը կարում չի հասնեմ, հմի որ բխին տեսաւ ոչ, ասես տեղն ու տեղը մխտուեց. «Վանի՛ ջան, բալա ջան, դու եկա՛ր, մայեամ (ուրեմն) ես քե տեսնալ պըտի...» ասեց հու ծնկները թուլացած ճամպի միջումը չոգեց: Բխանն ձիի վրիցը թուաւ, վաղ տուաւ, մօրը ճտովն ընկաւ: Էլ հո՛վ կարա պատմի թէ հի՛նչ էր անում ըստեղ մերը՝ տղին: «Վանի ջան, բալա ջան» էր ասում հու գլխիցն ինչ կլի ոտը պաշում, լիզլիզատում. թողում չէր որ դօշիցը պուկ գայ, թէ ինչ ա մի հետ էլ ես խտտեմ, էրեսիցը պաշեմ, որ սիրտս հովանայ... Ուզում էր, ասես, սիրտն էն մը. նութին (րոպէին) ճղի, հու բխէն միջումը դնի, ես չէ, աչքի լիսերն հանի որ Վանու ոտի տակը գցի...: Հինչ երկարացնեմ, էս թահրով բխին վեր կալանք, եկանք տուն: Ծերունին լուեց: Ապա ձեռքը դէպի ճակատը տանելով՝ նորէն գլխակապը հանեց, ճաղատ գլուխը շոյեց և կրկին շարունակեց.

— Հմի դուք կասէք էս հայկորը հինչ ա ըսենց էր-
կէն-բարակ խօսում. մենք ուզեցինք որ Նոյի ազգաւի
բանն իմանանք, ու իրա տղի պատմութիւնն ա կցել:

— Զէ, պատմիր, մենք սիրով լսում ենք, ապահո-
վացրի ես ձերունուն:

— Հա, ինչ կլի հմի պատմեցի թէ՛ ծնողն ինչ ցաւ
ու կրակի մէջ ա ըլում, եփ իրա էրեխին զարիբութիւն ա
զրկում: Հմի էլ մին ուրիշ ցաւ պատմեմ. — Քիչ առաջ եփ
ընկերդ ասեց տունդ լսի չչինեցիր, կըլի որ փող չունիր.
ասեցի ընչի չունի. փող էնքան ունէի. որ մինը չէ, էր-
կու էտած էլ կշինի, թէ որ ուզի: Սրանով ուղումի ասեմ
թէ՛ ես հարուստ եմ: Ամա դէ գեղականի հարստութիւնն
ի՛նչ ա: Մին հազար, ես էրկու հազար մանէթ որ ունե-
նում ա, ես չէ մի քսան, էրսուն գլուխ տաւար, մին
պուճուր իլիսի ձի, մին բանի ուլախ, էն ա ասում են թէ՛
մեծ դովլաթի տէր ա: Ես էլ ըտենց հարուստ ի. Եփ Օ.
սէփ հայր ոտըրն ասեց՝ փողդ խարջի ըէխին ուսում տու,
ես հենց գիտացի թէ իմ նազդ (կանխիկ) փողը բաւական
կլի դրան: Ասեցի էն լաւ ա իմ Վանին յուսումնական
ըլի, բանդ ես հազար ես էրկու հազար մանէթի տէր:
Փողը նրա գլխին մատաղ. իմ բաղն ու բաղչէն, իմ տունն
ու ջազացը, իմ տաւարն ու ձիանը որ ինձ մնան, ընէլ
ինձ հերիք ա: Ամա դէ որ փողին ճնդիցը կցեցի ոչ խար-
ջիլը, — հեշտ բան չգիտաք գեղականի հմար տարին իրեք
հարիւր մանէթ գիմեազը փող զրկիլը, — էն ա տեսայ որ
օխտը տարուայ մէջ՝ էլած փողս ձեռքէս դուս եկաւ հու
ես մնացի դարդակ: Էդ տարին Վանին գիմեազը պըծել
էր: Գրեց թէ, ա հեր, ինձ պտի օգնես որ գնամ ունի-
վերս: Էս բանը ինձ փիրբի մէջ գցեց. ընդուր որ տես-
նում ի թէ օրս փիս տեղ ա մթնում: Գնացի վանահօր
մօտ խորհուրդի: Հայր սուրբ ասեցի, ախր ձեռիս փողը
դուս եկաւ ըէխէն էլ գրում ա թէ ինձ ունիվերս զրկի:
Ես ինչ անեմ: Ուզում եմ Վանին բերել տամ. բոլ ա (բա-
ւական է) որքան յուսում առաւ: Հայր սուրբը, հախ Աստ-
ծու իմ ղօլը (կողմը) խօսաց: Ա Սար, ասեց, թէ որ փող
չունես, գիմեազի յուսումն էլ ա բաւական. գրի թող գայ:
Էն ա ես էլ գրեցի: Ամա դէ Վանին թարսի ձին նստեց

էլ վեր չեկաւ (խիստ հակառակուեց): «Ա հեր, գրում ասինձ, դու մի բաղ ես տնկիլ, պահել, բջարել (մշակել), ծառերը հասցրել, մին ջուր տուել ես, մնացել ամէկէլը որ բաղը հասնի, պտուղը քաղես: Հմի դու էդ ջուրը բէ վախտ (անժամանակ) կտրում ես, պտուղը խակ թողում, էդ Աստօծ վեր չի ունիլ: Իմ ընկերները դիպ գնացին՝ որը Մոսկով, որը Պետրպօր: մինակ ես եմ մնացել ձեռս ծոցումս, գլուխս քաշ: Եկ էդ բանը դու մի անիլ, իմ վիզը մի կտրիլ...»: Դէ ձեզ եմ հարցնում, մի հեր որ իրա մին ու ճար էրէխիցը ըսենց նամակ ըտանայ ինչ կանի:

— Ի հարկէ, բոլոր էլամ չեյած չեյածը կծախի, նրան կու դարկի, արագ պատասխանեց Պետրոսը:

— Հա, ապրես, ես էլ ըղենց արի Ինչ որ ջէրումս, ես սանդուխումս փող էր մնացել, էն հւարեցի դրկեցի Վանուն, ասեցի, որդի, էս բեզ ճնապարի խարջուլս: գնա, Աստօծ բեզ հետ: յուսումի ու ապրուստի փողն էլ կկարկեմ: Սրանից եդը հօրենական մի թթի բաղ ունիք, էն ծախեցի քաշալ Մօռու տղի վրէն ութ հարիր մանէթի հու փողը եաւաշ եաւաշ դրկեցի Վանուն: էդ հերիք չաբու: Եդնան մեր էս ջրի վրայ մի ջաղաց ունինք, կլի որ տեսած ըլիր:

— Այո, տեսել ենք, հաստատեցի ես:

— Հա, էն ջաղացը ծախեցի խօճայ Մարութի վրէն չորս հարիր մանէթի ու փողն էլի դրկեցի Վանուն: Սա էլ իմ քոռ բաղդիցը, ունիվերսի մի կլասումը իրար վրայ էրկու տարի մնաց: Գրում էր թէ, միթամ, վարժապետները փախուցին են արել (նախանձել էին) որ ինքն ընենց լաւ կարթում աս, հու ճգրու մին տարի աւել ին պահել էն կլասումը: Ամա դէ ուրիշներն էլ ասել ին մեր կնրաւոր տղին թէ Վանին մի նախշուն աղջկայ սէր ատուել, եդիցն ընկիլ, դէս ու դէն շուռ եկիլ, ու դրա հմար աս կլասումը մնացել: Սուան ու դարթը Աստօծ աս իմանում, անջախ էս կայ որ էդ մին տարուայ խաթրին ջաղացի փողը քոռ ու փուշ էլաւ (ոչնչացաւ): էն աս ջլիզ (բոլորովին) դայամիշ ի ըլել (յոգնել էի), գնացի Հայրսուրբի մօտ, ասեցի, աս վարդապետ, արը էլ դմանալու

ուժ չունեմ, հի՛նչ անեմ: Ասեց, ա Սար, շատին դիմացել
ես, քիչին էլ դիմաց. ձիանդ ծախի, եզներդ ծախի, փող
հասցրու: Գու սկի վախիլ մի. տղադ որ եդ դառնայ, իրա
սովորած թահրովը լաւ բայ էլ ա տնկիլու, նոր դայդի
(տեսակի) ջաղաց էլ ա շինիլու, եզներդ ու ձիանդ էլ ա
շատացնիլու: Ուսում առած տղան որ կայ, Նոյի աղանին
ա, որ ձթենու շիւր բերանումն եդ ա գալիս հու բախ-
տաւարութենի խաբարը բերում ծնողին: Հի՛նչ երկարաց-
նեմ, հայր սուրբի խօսքերը սիրտ տուին ինձ, ես էլ կցե-
ցի առաջ ձիաներիցս, վերջն եզներիցս մի մի ծախել ու
փողը դրիել Վանին: Էն ա վերջին տարին էր. ամառը
Վանին ամեն բան պտի վերջացնէր հու եդ գար զեղը:
Խօսք չկայ. որ ես էլ, օրեր եմ հմբարում (համարում), թէ
եփ ա լէխէն եդ գալու, որ համ էս դժար հոգսիցը մեզ
աղատի, համ էլ իրան տեսնանք հու կարօտներս առնենք:

«Մին էլ էս ա մին գիր եմ ըստանում, թէ ա հէր,
յուսումս վերջացրել, պրծել եմ, ամա ըստիզ պարտք ու-
նեմ, բայ չեն թողնում ինձ. որ դիան որ ա մին էրկու
հարիլ մանէթ հասցրու որ էս պարտքը թափեմ հու
դամ: Ղօրթ ա, պարտքի անումը որ լսեցի, սիրտս շատ
կոտորուեց, ամա դէ ասեցի «գիւշան աղլամաղ (ընկնողը
լաց չի լինիլ)», թող էս մինն էլ եօլայ տանենք: Գնացի
խօջա-Մարութից էրկու հարիլ մանէթ պարտք արի, թիւ
մանին մի արասի շահով (6/0 24) հու մին ամիս ժամա-
նակով: Էդ փողն էլ դրկեցի Վանին: Մտրումս էլ ասըմի
թէ, էս ա լէխէս կգայ, համ էս պարտքը կտայ, համ
էլ իրա ծուացրած բաները կդրատի: Հէնց դիտում ի թէ՛
Վանին որ իրա յուսումովը գեղ մտնի, Էնա փողն երկըն-
քիցը վեր ա թափուիլու:

«Անց կացաւ մին ամիս, էրկու ամիս, Վանուցը խա-
բար չկայ: Մեծ փիքրի մէջ ընկայ. Եարար էս ի՛նչ էլաւ.
նրդի մնաց Վանին. չըլի մի քամբադուութին պատահեց.
եա չէ, Պետրպօլումը բռնեցին լէխիս, չուն ըսննց բա-
ներ շատ ի լսել: Մի խօսք, սիրտս ճարում էր:

«Մէկ էլ էս ա մի օր Վանիցը գիր եմ ստանում,
գրում ա թէ՛ ա հէր, աչքդ լիս ըլի, եկել եմ Թիփլիս
ու մի սիրուն աղջկայ հետ պսակում եմ, հալի հալբաթ

(անպատճառ) բու ու նանի օրհնութիւնը դուշի թևովն հասրցրու ինձ:

«Մնց որ մարդու գլխին մի թուփ կտրաբի, ընէնց էս խարաբը տրաբեց իմ գլխին ու ինձ շմացրեց, Սաղ մին քանի օր ես ու կնիկս ջիւղ պելացել, ընկել ինք ըստեղերք, ոչ արածներս ինք խմանում, ոչ շարածներս: Չատ մաածելուց ու փիքր անելուց եղբ՝ վեր եմ կենում գրում տղիս թէ՛ «ն որդի, ախար հլա բու հինչ պսակուելու վախտն ա. հլա նոր ես յուսումդ վերջացրել, մին եկ րեզ տեսնենք, մեր կարօտն առնենք, մեր ցաւերիցը խօսենք ախար բու աբովն (յուստովն) էլած չէլածս ծախել, պարտքի տակ եմ ընկել, եկ հլա իմ ցաւին մին ճար արա. էլ եդ գնն պսակուելք»:

«Ճմի դուք փիքր կանէր թէ՛ գեղացին իրա տղին պսակում ա տասնհինգ, եա չէ, տասնըվեց տարումը. էս խն Սաբի ապերը չէր սւղում որ իրա քօանըչորս տրե կան տղէն պսակուի: Գրա մասին, գրուստն ասած, մին էն էր որ ես Թիֆլիսի աղջկերանցից վախում ի. չուն դրանցից շատ բաներ ի լսել. մտածում ի թէ՛ չլի տղիս գըլխից հանին ու մին բու ու քաշալ զատ կապին գլխին: Ջահելը, հօ գիտաք, բու կլի. ասումի ընենց ըլի՛ որ մինուճար տղիս անբաղդ չանեն. մին էլ էն էր՝ որ գիտումի Վանին Թիֆլիզում պսակուելուց եղբ էլ մեզ մօտ չի գալու. վաթանն (հայրենիքն) էլ ա մաքիցը գցելու, հօր տունն էլ: Էս ցաւին, գիտաք, դմանալ չէր ըլիլ:

«Իմ գրին տղէս պատասխանում ա թէ՛ ա հէր էս աղջկանը Գետրապօլքից եմ սէր տուել, ինչկլի հեղը չպսակուեմ՝ կարալ չեմ դեղը գալ. հալի հալքաթ բու օրհնութիւնը ուղարկիլ:

«Գրում եմ. ա որդի, ախար մին ասես էլ ա՛ էդ ինչ աղջիկ ա. ինչ աղբի որդի ա. հայա, ուն ա, ջհնդ ա: Ախար ես ննց իմ օրհնութիւնը դարկեմ էն հարսին, որի էրեսը չեմ տեսել, ձէնը չեմ լսել: Գրում ա թէ՛ ն հէր, խն ես էդ բանը հարցնում. ես հօ թուրքի եա ջհուդի աղջիկ չեմ ուզիլու: Գիտում չես որ ուզածս քրիստոնի աղջիկ կլի: Ամա մի էրկու օր եղբ մեր կնքաւոր տղէն գրում ա, (չուն նրան էլի հարցրել), թէ՛ չես ասիլ, Վանին

պսակուում ա մի գիւրջու (վրացու) աղջկայ վրայ...

«Հմի ձեզ եմ հարցնում. մին հեր որ էս բանը լսի, ինչ կանի: Հը՞. Ամա ուր եմ հարցնում. դուք ինչ էք գիտում: Հեր էք ըլել որ գիտաք. էն ա կցեցի վրսիս վայ տալն ու անիս ու վաճ անիլը: Ամա դէ էլ ուր կհասնէր: Բանը բանիցր անցել էր:

— Ուրեմն քո օրհնութիւնը չուղարկեցիր, հարցրի ես:

— Ձէ չուղարկեցի: Ամա ինքը առանց դրան էլ պսակուել պրծել էր. Եղոյ էլ հլա ինձ վրա ուռած գրում ա թէ՛ «ա հեր, դու որ քու օրհնութիւնը ինձ չղրկեցիր ու էս իշխան մարդկանց միջումն ինձ խայտառակեցիր, էլ յօրէս դէնը ես քու որդին չեմ»:

— Յետոյ դու ինչ պատասխանեցիր:

— Ոչինչ: Մինակ էն արի, որ նրա գիրը վեր կալայ գնացի վանքը: Էն վախտը Օսէփ հայր սուրբը մեռել էր: Գնացի նրա գերեզմանի առաջին չոգեցի, քարը համբուրեցի հու լաց ըլելով ասեցի. — «Օսէփ հայր սուրբ. Օսէփ հայր սուրբ, լուս դառնաս դու հողովդ ու քայովդ. ախար դու ինձ ասեցիր որ իմ Վանին Նոյի աղաւնին ա, էսա ձթէնու շիւր բերանումս եզ ա գալու, որ բաղտաւորութենի խարարը բերի ինձ. բա լսի՞ ըտենց չիլաւ... ախար Վանին հմի Նոյի աղաւն ա դառել, ջամդաքի վրէն նստել ա՛ հու էլ եզ չի գալի. սրա ճարն ինչ կլի...»:

Ծերունին լոց, կարծես, այլ ես չկամենալով լսօսել: Բայց Պետրոսը, որ ըստ երևութին, չէր նկատում ծերունու յուզմունքը, հարցրեց.

— Վերջը ինչպէս եղաւ. տղադ պսակուելուց յետ գիւղը չեկան:

— Եկաւ, հինգ տարուց եզը. կնիկն էլ բերաւ, մի երեք էլ գիւրջու ճտեր հեղը:

— Յետոյ:

— Յետոյ էլ ինչ. մի տասը օր մնաց, սաքի (որպէս թէ) քեր խաթրը առնիլու հմար ու էլ եզ գնաց:

— Բաս ըսկի չհարցրի՞ր թէ ինչո՞ւ է այդ աղջկայ վերայ պսակուել:

— Հարցրի. ասեց սրա հերը ընտի մեծ դուրուլում ա. պսակուեցի որ ինձ էլ կռան տակը քաշի հու մենձ

մարդկանց ջարդը (շարքը) գցի:

— Այսուամենայնիւ, դու քո նպատակին հասել ես. տղիդ բարձր ուսում ես տուել ու Թիֆլիսի նման քաղաքում յայտնի մարդկանց շարքը գցել, այդ էլ մեծ բան է, նկատեց ընկերս:

— Արե մատաղ. բա ես իմ էլած չեկածը փշացրել, Վանին յուսում եմ տուել՝ որ նա Թիֆլիզի՞ն պէտք գայ. խի՞ Թիֆլիզումը նրան նմանները բլի՞շ կան. եա չէ, իմ սիրտը շատ էր ցաւում էդ բարբաղի համբ.,. ես իմ տղին ուսում եմ տուել՝ որ առաջ իմ օջախը շինի. իմ հանգած ճրագը վառի. իմ տունը հարս ըիրելով ինձ հու իմ պառաւին ուրախացնի. եդն էլ իրա ուսումովը էս խաւար գեղը լուսաւորի. մեր խեղճ ու հայկան շինականին գոռից, բէգառից ազատի... Թիֆլիզում Վանին թող հենց հրեշտակ վեր բերի երկնքիցը. ինձ ի՞նչ... հրէն, որ երկրում որ լուսաւէր, եա չէ, փանդ ու փիլով (հնարագէտ) մարդ կայ, հենց դպայ Թիֆլիզ ա վազ տալի. դուք մեր էս խեղճ գեղի դարդը քշեցէք, որ ոչ տէր ունի ոչ սրտացաւ....

— Վանին գոնէ փող ուղարկում է բեզ, հարցրի ես ծերունուն:

— Զէ, չի դարկում, մեր կնքաւոր տղին ասել ա թէ ապուն ասի ինձանից նեղանայ ոչ. խարջս շատ ա մեծ. տարին 3—4 հզար մանէթը հերիք չանում, ես էլ անջախ (հաղիւ) էդքան՝ եմ աշխատում:

— Իսկ խօջա Մարութի պարտքը վճարեց:

— Զէ, քե մատաղ. նրան էլ էրկու գոմշակաւս տուի, հոգիս ազատեցի:

— Հապա երբ այստեղ եկաւ, իսկի շասացի՞ր թէ ինչո՞ւ գոնէ իւր համար արածդ պարտքը չի վճարում:

— Ասեցի. ասում ա, ա հեր, դիֆ մէկ չի. ինչ ունես շունես, ծախիր կեր. եփ որ կղարտակուես, կգաս Թիֆլիզ իմ տանը կապրես:

— Ի՞նչ ասացիր:

— Ասեցի եանդլիշ ես, որդի, որ իմանամ թէ քաղցած մեռնելու եմ, իմ ոտն իմ գեղիցը դուս չեմ դնիլ. ըտեղ ծնուել եմ, ըստեղ էլ պտի մեռնեմ. իրա վաթանը

մոռացողը, հօր տունն աչքից ու մտքից բացող մարդ չի, հայրան ա:

— Եւ այդ դրութեան մէջ, ուրեմն դու ոչ մի մխիթարութիւն չունի՛ս, հարցրի ես ծերունուն, ի սրտէ ցաւակցելով նրան:

— Ունեմ, ո՛նց չունեմ, պատասխանեց նա յուզուած ձայնով. իմ մխիթարութիւնն էլ էն ա, որ եփ լսում եմ թէ մեր գեղականին մինը ուզում ա իրա տղին քաղաք դարկի յուսում առնելու, էն սհաթը գնում եմ կռնիցը բռնում, բերում մեր հայաթումը կանգնացնում ու ասում. — տես որդի, էս Վեդունց Սարգսի չէն օջախն ա, որ էս օր վերանայ ա դառել: Ա՛յ, տես, կտուրը ծռուել ա, բէշերը թափուել են, գերանը կախ ա ընկել դիւմը դարտակուել ա, հու մեզ թացան տուողը մի էժ (այժ) ա մնացել... Մենք էլ, տեսնո՞ւմ ես, մարդ ու կնիկ ծերացել, մնացել ենք անտէր. ոչ ձեռք կայ որ մեր դուռը բանայ. ոչ ձէն կայ, որ սրտներս ուրախացնի. . էս դիփ նրա մեղն ա, որ ես իմ տղէն յուսումի դրկեցի... Վախիր էդ բանիցը որդի. էրեխէդ քու կշտին սահիր, տանիցդ մի հեռացնիլ որ իմ Վանու նման Նոյի ագռաւ չդառնայ...:

— Բայց դուք հօ դրանով չարիք էք գործում, բացականչեց Պետրոսը, վրդովուելով:

— Չարի՞ք խի եմ գործում, պատասխանեց ծերունին եռանդով. էւելի լաւ չի՞ որ մեր գեղը յիսուն վար անող տղամարդ էւելի ունենայ, բանց թէ հարիր Նոյի ագռաւ. վար անողը հլա հաց կբիրի տուն, քիւլփաթի ռուզին կշտացնի. Նոյի ագռաւը ի՞նչի ա պէտք: Եա չէ, հո՞վ ա մեղաւոր որ ես հմի ըսենց եմ խրատում մարդկանց. ես թէ՛ իմ տղէն: Մր սհաթ առաջ գնացել էք Տէր-Մակուչի եփսէն (օձիւրը) բռնել թէ՛ էս խի՞ ժամի ըռաչին բաղ ու բախշայ չես շինում. էս խի՞ դու գիտուն չես, էս խի՞ տղերանցդ յուսումի չես դրկել... Խեղճն էն սհաթին եկաւ ինձ գանգատուեց: Ասեցի, ո՞ւր ա, էդ շլապաւոր տղերանց մի դրկի ըստեղ՝ ես էլ նրանց իմ հարցմունքն անեմ. Հմի հազիր եկել էք. խնդրում եմ որ ասէք. — հո՞վ ա մեղաւոր որ գեղի քահանան Տէր Մակուչն ա. հո՞վ ա մեղաւոր որ եղցու առաջը անապատ ա. հո՞վ

ա մեղաւոր որ պեղը կեղտոտ ա, տները տափից կպած, հայաթները թրքով լիբը, քուչէքը ծուռ ու մուռ... ասեցէք տեսնեմ, հնվ ա մեղաւոր, խեղճ դեղականը թէ՛ նոյի ազուաները: Ախար ինչ կլի հմի էս դեղարանքից մի տասը, քսան տղա գնացել են յուսում առիլ, լուսաւորուել. հմի ուր են. ընչի՞ նրանցից մինն ու մինը եւ չը եկաւ որ իրա հօր օջախը վառի. իրա վաթանը պայծառացնի, որ վեղացին հէնց մին օրինակ էլ ա տեսնի ու ասի թէ՛ «զորթ ա, յուսումը լաւ բան է. եկէր մենք քար ու քացախ ուտենք, ամա մեր էրեխանց յուսում տանք, լուսաւորենք...»:

Ծերունին լռեց. իսկ մենք պատասխանելու ոչինչ չունէինք: Բարեբաղդաբար այդ միջոցին պարտիզի դռնում երևաց մեր հիւրընկալն, որ եկել էր մեզ ճաշի կանչելու: Օգուտ քաղելով առիթից՝ մենք վերկացանք տեղից և սղջունելով ծերունուն հեռացանք ծանր տպաւորութեան տակ:

Երբ իջնում էինք սօսիների դռնիվայրով հարցրի Պետրոսին թէ՛ — արդեօք յիշում է այն խօսքը, որ ասում էի՛ թէ՛ «կգանուին հողոյ կամ մտքի աչքերով հիւանդներ, որոնք խաւարը կտրոնեն իբրև դեղ, իրենց աչքերի ցաւը մեղմելու համար»:

— Յիշում եմ, ասաց նա. և այս ծերունին այդ հիւանդներից մինն է:

— Այո. սակայն նրա միտքն առողջ և հոգին կայտառ է եղել. երկուսն էլ հիւանդացրել է լուսաւոր որդին, յարեցի ես:

— Անշուշտ, պատասխանեց ընկերս և այս անգամ, արդէն, խոր համոզմունքով:

ՄՈՒՐԱՅԱՆ

